

ԱԼ. ՄԱՐԶԱՆՅԱՆ
(Իգառական-մեխանիկ)

ԲԱՐԲԻՏՈՆԵՐ

ՅԵՎ ՆՐԱՆՑ

ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

ՊԵՏՈԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1937

Պատ. Խոմքագիր՝ Ն. ԹԱՆՉՅԱՆ
Տել. Խոմքագիր՝ Մ. ՃԻՆԻՔԱԼԱՅԱՆ
Սբուռովիչ՝ Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Դավթիս № 202
Հրատարակչ. № 3599
Տիքած 1000
Գաղափեր 563

—
3
0

Հանձնված և պահպատճյան նոյեմբերի 1-ին 1936 թ. Ստորագրված և տպացված է գրության հունվարի 25-ին 1937 թ. Սատարմատ Ա-5.


Типография армянского из-ва „ГРО“, Ростов-Дон, Ворошиловский пр., 27

Ա. ՄԱՐԶԱՆՅԱՆ
(ԿԵՊԵԼԻ ԺԵՂԱՄԵՐԻԿԻ)

629.114.2-77
Ա-38

ԱՄՈՒՋՎԱՆ Հ 1967 թ.

ԲԱՐԲԻՏՈՆ
ՅԵՎ ՆՐԱՆՑ
ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ



Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Մեր այս աշխատության նպատակն է—

1. Ծանոթացնել ավտո-տրակտորային վերանորոգվան արհեստանոցներում, ՄՏԿ-ներում և խորհունտեսություններում աշխատող մեխանիկներին, արհեստանոցի ղեկավարին, փականագործներին, թիթեղագործներին, բարերիտը լցնողներին, խառածներին, արհեստանոցային ու ղաշտային բրիգադիրներին, շրջիքներին և տռաջին կարգի արտկատրիստներին բարբիտաների տեսակներին, նրանց առանձնահատկություններին և նրանցով պահանջները ու առանցքակալները լցնելուն, բարբիտով լցված պահանջների և առանցքակալների մեխանիկական մշակմանը, ավտոմոբիլի ու տրակտորի վերանորոգման ժամանակ մոնտաժ անելուն և նրանց ռացիոնալ շահագործմանը:

2. Ծանոթացնել գիտահետազոտական աշխատանքների հետ կապված նոր տեսակի բարբիտների կիրառմանը և ինչպես նոր, այնպես ել գործածվող բարբիտների օտարական շահագործմանը։ Յեզ այդ հնարավորություն կտա խնայելու անազի ծախումը, բարելավելու ավելացուրային շամագործման պայմանները, իսկ այդ բոլորի հետևող կինի այն, զոր մեր յերկիրը կկարողանա խոօսը չափակերական քանակութեք անազի ներմուծումն արտասահմանից։

Հեղինակին հայտնի յեն դեպքեր, յերբ տրակտորների պարապությունները հասել են 50—75%-ի՝ հատկապես բարբիտը սխալ լցնելու, նրանով լցված առանցքակալները մեխանիկական վոչ ճիշտ մշակման յենթարկելու և այդ առանցքակալների վոչ իռացիոնալ շահագործման պատճառով։

Մեզ մոտ ավտո-տրակտորային վերանորոգման արհեստանոցներում, վոչ բոլոր գեպֆերում են հարկ յեղած ուշադրություն զարձնում բարբիտային տնտեսության վրա, և շատ հաճախ բարբիտ լցնելու և մշա-

կելու ցեխը տեղավորում են պղնձագործական ցեխի կամ գարբնացքի անկյունում, և հաճախ այդ անկյուններն անդամ ապահոված չեն մինիմալ անհրաժեշտ սարք ավարտով:

Այս գրքույկը կազմված է Մոսկվայի Գունավոր մետաղների համամիութենական մեխանիզացիայի ինստիտուտներում (1933 և 1934 թվականներին) հեղինակի կողմից կատարված հետազոտությունների հիման վրա:

Խնձեմերմեխանիկ Ա. ՄԱՐԶԱՆՅԱՆ

ԲԱԲԻՏԻՏԵՐ

Մեխանիկները հայտաբերվելուն զուգընթաց՝ առանցքակալների անհրաժեշտությունն ել զգալի դարձավ։ Առանցքակալների միջոցով իրար նետ միանում են մեքենաների նետ շարժվող մասերը։ Առաջին, փայտե առանցքակալներից նետ յերևան յեկան մետաղից, յերկաթից, չուզունից կամ բրոնզից պատրաստված առանցքակալները։ Պղնձի և անապի խառնուրդով պատրաստված առանցքակալները լայն չափով տարածվեցին և ներկայում ել գործադրության մեջ են։

Ավելի ուշ, տեխնիկայի զարգացմանը զուգընթաց, ակնհայտ դարձան մետաղե առանցքակալների առավելությունները, բայց նրանց գիմացկունությունն ու յերկարատեսությունն անբավարար գտընվեցին։

Մեքենաների տճող հզորությունն՝ առանցքակալների նկատմամբ բարձր պահանջներ առաջարկեց։ Աճում եր առանցքի պտույտների քանակը, առանցքակալի վրա ազդող անսակարար ճնշումը։ Շուտով պարզվեց, վոր գործադրություն հալոցների սաստիկ կարծրության հետեւանքով առանցքակալների շփումը չափից ավելի յե, և պողպատե առանցքն արագ ե մաշվում։

Հարյուր տարի առաջ Փրանսացի Բարբրիաի կողմից առաջարկ յեղավ բրոնզե պահանջի ներսի առանցքի նետ անմիջապես շփուղ մասը լցնել անախիքրիկցիոն հալվացքով, բաղեցած 83 % անապից, 12 % սուրմայից (ծարբաթարից) և 5 % պղնձից։

Այսպիսի մի հալվածքը չեղոքացնում եր առանցքակալների մաշումն ու սաստիկ շփումը։ Այս հալվածքը լայն չափերով տարածվելու հետեւանքով խնդիր առաջացավ հալվածքի արժեքն եժանացներ, անապը—սրան իր հատկություններով մոտիկ—կապարով փոխարինել։ Կտապարը, ինչպես և անապը, հալվում ե վոչ շատ բարձր ջերմության մեջ և նույնական մասը մասաւուկ եւ։

Այսպիսով յերեան յեկան մեծ քանակությամբ կապարի և անազի խառնուրդով բարբիտներ, վորոնց տարրեր քանակությամբ կապար, անազ, սուրմա և պղինձ են պարունակում իրենց մեջ:

Այս հալվածքները գործադրվում եյին ամեն գեղքում, յերբ բաբբիստ եր պահանջում, հաշվի չառնելով հալվածքի հատկությունները և առանցքակալների աշխատանքի դժվարությունները:

Այսպես յերկաթուղիներում գործադրվում եյին հալվածքներ՝ հետեւ բաղադրությամբ.

Անագի % -ը	Սուրմայի % -ը	Պղինձի % -ը	Կապարի % -ը
0-80	7-20	0-10	0-80

այսինքն ամեն տեսակի բաղադրություններ, և սրանց շաբաթում արագնթաց շոգեքալցերում կարելի յեր տեսնել հալվածքներ՝ անազի 20%, սուրմայի 16%, պղինձի 5% և կապարի 59% բաղադրությամբ, իսկ տպանքատար վագոնների առանցքակալների բաղադրությունները հաճախ լինում եյին—անագ՝ 48%, սուրմա՝ 14%, պղինձ՝ 2%, կապար՝ 36%:

Այսպիս եր գրությունը մինչև 1918 թ., յերբ առաջին անգամ ԽՍՀՄ-ում հարապարակվեց պրոֆեսոր Բոչվարի աշխատությունը:

Պրոֆեսոր Բոչվարն ուսումնասիրել եր անտիֆրիկցին նպատակներով գործադրվող կապար-սուրմա-անազային հալվածքները Այդ աշխատանքի արդյունքները հիմք ծառայեցին Բաբրիսի առաջին ստանդարտին (աղջուսակ № 1):

Այս ստանդարտը բաղկացած եր տարրեր բաղադրության հինգ մարկայի հալվածքներից, վորոնց առաջազրվեցին աշխատանքի տարրեր պայմանների համար:

Բաբբիսների առաջին ստանդարտը

Աղյուսակ № 1

Բաբբիսի	Բաբբիսի բաղադրությունը առկուսներով				
	Անագ	Սուրմա	Պղինձ	Կապար	Տարրեր խառնուրը ների ընդհանուր բանակը
Բ-1	մնացածը	11-12	5-6	—	0,3-ից պակաս
Բ-2	15-16	15-16	2,5-3	մնացածը	0,3-ից պակաս
Բ-3	12-13	13-15	2,5-3	»	0,3-ից »
Բ-4	4-5	13-15	2,5-3	»	0,5 ից »
Բ-5	—	16-18	1,2-1,7	»	0,5 ից »

Բ-1. Գործադրվում. Եալելի պատասխանատու գեպքերում, արագ պատվող առանցքներ ունեցող առանցքակալների համար յերբ բեռնը վտածությունը մեծ եւ:

Ե-2. Արագ պտտվող առանցքները ունեցող առանցքակալների համար, յիրք բեռնվածությունը մեծ է:

Ե-3. Միջին արագությամբ պտտվող առանցքներ ունեցող առանցքակալների համար՝ միջին բեռնվածությամբ:

Ե-4. Նվազ արագությամբ պտտվող առանցքներ ունեցող առանցքակալների համար՝ միջին բեռնվածությամբ:

Ե-5. Նվազ արագությամբ պտտվող առանցքներ ունեցող առանցքակալների համար՝ նվազ բեռնվածությամբ:

Ե-6. Նվազ արագությամբ առանցքակալների համար՝ փոքր բեռնվածությամբ:

Ըստ մինչև 1931 թ. պատրաստում ելին բարբարի մարկաներ միայն այդ ստանդարտով: 1931 թ. պրոֆեսոր Զայցենս անտիքրիկցիոն նոր հալվածը հայտնաբերեց և ստանդարտը փոփոխության յենթարկվեց (աղյուսակ № 2): Բարբարի մի քանի մարկաներ, վորպես ցածրութակ և գործնականում քիչ զործազրելի, դուրս հանվեցին և փոխարինվեցին հատուկ բաղադրության նոր բարբարով, վոր լաբորատոր և արտադրական փորձարկությունների ժամանակ լավ վորակ հայտնաբերեց—մինդեղակաղմիակական բարբար՝ Ե-ՄԿ (նկ 7b)

Ստանդարտ բարբիցներ

Աղյուսակ № 2

Հալվածքի մարկան	Քիմիական բաղադրությունը տոկոսներով						Մեկ առն նի արժե- քը՝ ռուբ- լիներով
	Անող	Սուրմա	Պղինձ	Սկնդեղ	Կաղմի	Կաղաք	
Ե-83	83	11	6	—	—	—	2600
Ե-ՄԿ	11-12	11-12	1,5-2,0	1,2-1,7	1,3-1,8	մացածը	1300
Ե-16	16	16	3	—	—	»	960
Ե-10	10	15	3	—	—	»	860
Ե-8	—	17	1,5	—	—	»	670

Այլ յերկրներում նույնպես կան անտիքրիկցիոն ձուլվածքների ստանդարտներ և նորմեր, վորոնք պարունակում են իրենց մեջ առարկել քանակի կապար, անագ, սուրմա և պղինձ: Վերջին տաս—տասնհինգ տարիներում, համաշխարհային տեխնիկայի բնագավառում սկսել են յերեվակ կապար-անագային անտիքրիկցիոն ձուլվածքներ՝ հատուկ բաղադրության: Բացի կապարից, անագից, սուրմայից և պղինձից, բարբարները պարունակում են նաև նիկել, կաղմի, մինդեղ, յերկաթ ու նույնիսկ արծաթ և ուրիշ շատ մետաղներ:

Բաղադրությունների այս բաղմանեսակությունը նոր հալվածքի պատենտ վերջնելու ցանկությամբ և բացատրվում, սակայն մատնա-

նշված սետաղներից շատերն ունեն իրոք խոշոր նշանակություն։ Մեր միության մեջ կատարված հետազոտություններն ապացուցել են, վոր կառագուադային բարբարին կազմի և մինչեղ ավելացնելն իսկապես խոշոր ազդեցություն եւ ունենում հալվածքի հատկության վրա։

Նույնը պիտի ասել նաև նոր անտիֆրիկցիոն հալվածքի՝ գրաֆիտա-մետաղի մասին, վորը գրաֆիտ և պարունակում Այս հալվածքը, վոր Գերմանիայում DKV մարկայի ավտոմոբիլների և այլ շարժիչների համար եւ գործադրվում, բարձր տեսակի անտիֆրիկցիոն հատկություններ ունի և մեզնում նույնպես լայն չափերով կարող եւ տարածվել, յերբ այդ հալվածքը, վորը ներկայում միայն արտասահմանյան պատենտ ունի, հնարավոր կենի պատրաստել մեզ մոտ։

Այս հալվածքը, բացի բարբարի ընդհանուր մետաղներից՝ սուրմայից, անաղից, պղնձից և կապարից, պարունակում և նաև գրաֆիտ, վորը հալվածքի մեջ գտնվում է անխառն վիճակում։ Դրաֆիտին առանձնապես գյուրությամբ և կազմում յուղը բացի այդ, նա ունի յուղը ծենյուր առանձին հատկություն, վորը հնարավորություն և տալիս նրան — յուղը պակաս մատակարարվելու գեպքում պահեստի յուղ ունենալու։

Պատերազմի ժամանակ Գերմանիայում, վորը պատերազմի պատճառով կարված եր անապի շուկաներից և անապի սեփական բնավայրեր (հանգեր) չուներ, ստեղծվեց մի տեսակ կապարի բարբարի, վորը կալցիի բարբարի և կոչվում է հետազայում այս տեսակի բազադրությունների ձուրվածքները հետազոտվեցին և փորձի յենթարկվեցին նաև մեզնում — ԽՍՀՄ ում, և վերջին տասը տարվա ընթացքում լայն գործադրություն ունեն մեր յերկաթուղիներում։

Կալցիի բարբարի (Բ-НТԿ) 98,5% ոռվկապարից և բաղադրված, բայց պրանից, նա ունի 0,8% կալցի, 0,7% նատրիոն և այլ հեշտությամբ թթվուտացող մետաղներ։ Այս հալվածքը հիանալի բանում և վագոնների առանցքակալներում։ Ներկայում շոգեքարշերն ել անցնում են այդ հալվածքին։ Կալցիի բարբարին իր վատ կազմունության պատճառով թափում են (ձուրում) առանց անապելու (ոօլյդա), սակայն կացնույն մեխանիկական ձևով — պահանապի մակերեսին սեղանաձև փորսկներ խառաւելու միջոցով։ Բարբարի շերտը՝ պահանդիներում 10 միլիմետր հասություն ունի։

Մոսկվայի գիտահետազոտական ավտոմաքարային ինստիտուտի (НАТИ) փորձերը ցույց են տվել, վոր այդ հալվածքով կարելի յի լիցք անել նաև բարակ պատեր ունեցող ավտոմոբիլների պահանդիները ևս, վորենդ բարբարով պահվում եւ միմիայն անազման շուրբիկ։ Ավտոմոբիլների վրա կատարված փորձերը ցույց են տալիս, վոր այս հալվածքը կարելի յի գործադրել նաև այլ շարժիչների վրա, բացի շոգեքարշերից։

Հալվածքի մարդան	Քիմիական բաղադրությունը առկոսներով						Մեկ առնանի զինը՝ առը- լիներով
	Անագ	Առում- մա	Պղինձ	Գրա- ֆիտ	Կալցի-	Նաո-	
Եղբայրիսաց- ված բարեիս	10	14	2	0,17	—	—	մացածը
Բ-HTK	—	—	—	—	0,8	0,7	մացածը
Կապարային բրոնզ	—	—	70	—	—	—	29,5 և զանազան խառնուրդներ՝ 0,5 և

Ժամանակակից տեխնիկայի զարգացումը շարունակվում է Հրապարակի են դալիս այնպիսի կարողության շարժիչների կանաչուկցիաներ, յերբ սովորական բարձր-կապարային բարեիսներն անկարող են այդ կարողության շարժիչների պահանջները բավարարելու նրանց չեն մնում առանցքակալներում, դուրս են մզվում, արագորեն հաջում են և փոխարինելու պահանջ առաջանում: Այդ կատարվում են հզորութիւններում: Այսպիս, որինակ, ամերիկյան կերտիս Փիթրման սավառնակների առանցքակալների բարձրունակ կապարե բարեիսը փոխարինել ենոր հալվածքով—կապարային բրոնզով: Սա մի ձուլվածք ե պղնձի ու կապարի, ապա նաև փոքր քանակությամբ, մինչև 0,5% նիկելի բազագրության: Այս փափուկ հալվածքը լցնում են պղնձպատե պահանջի մեջ, և նրա վրա մնում ե առանց վօրեն մեխանիկական ամրացման և առանց անգելու, միմիացն կալչելու միջոցով: Կապարային բրոնզի պղնձպատին կպչելու այս միջոցը հաջողվում է լիցքը կատարելու հատուկ յիշանակի շնորհիվ: Այսպիս մաքուր պղնձպատե պահանջը խորածուցում են 1000° առաջություն ունեցող ծորակի մեջ և պահում այնտեղ մի վորոշ ժամանակ, վորից հետո շիկացած վիճակում պահանջն արագորեն դնում են կապարայի սեղ, և նա լցվում է 1000°-ից ավելի տաքություն ունեցող կապարային բրոնզի հալվածքով:

Այս պայմաններում բրոնզն այնպիս ամուր և նոտում պահանջին, վոր գործվածքի տեղից կարել բաժանելն այլիս անհնարին և լինում—ալուվում և ինքը կապարային բրոնզը:

ՍՏԱՆԴԱՐՏ ԲԱՐԵԻՏՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Բարեիտների բազագրության մեջ մտնող մետաղների հալման առարկաները.

Անագ . . .	232° C	Կաղմի . . .	320° C
Կապար . . .	327° C	Մկնդիդ . . .	814° C

Տաքության աստիճանների խիստ առարկերությունը պահանջում է տաքության տվելի ցածր աստիճանում հալզող մետաղներն այրվելուց պատճ պահելու պատճառով բարձր աստիճանում հալվող մետաղները հնոյ մոցնել վրապես լիդատուրներ:

Լիդատուրներ են կոչվում միջանցի հալվածքները, վորոնց մեջ մետաղներից մեկն և ավելի մեծ տոկոսով գտնվում, քան վերջնական հալվածները: Այսպիս կապարա-անագային բարիտաները պատրաստելուց առաջ, պատրաստվում են պղնձի լիդատուրա՝ սուրմա-պղնձից: Նարադկացած և 62% պղնձից և 38% սուրբայից և հալչում և 630° տարության մեջ: Պատրաստում են պղինձը հալելով, նրան սուրմա խառնելով և խառնուրդն ածխի շերտով ծռ ծկելով:

Մինդեղ կաղմիի բաբերիտի միջ մինդեղ խառնելու համար նույնպիս պատրաստում են լիդատուր—սուրմային մինդեղ խառնելով: Դրա բաղադրությունն է՝ 20% մինդեղ, 80% սուրմա: Հալման աստիճանն է 615: Հալվածքի մեջ լիդատուրայի լիդանակով պղինձ և սուրմա խառնելու շնորհիվ հալվածքը 650° պղինձի բարձր տաքացնելու պահանջը վերանում է: Վորոշ քանակի հալվածք պատրաստելու համար նախատեսվում է՝ մաս կազարը հալում են ածխի շերտի տակ և տաքացնում մինչև 500°: Տաքության այս աստիճանում խառնում են սուրման և պղնձի ու մինդեղի անհրաժեշտ քանակի լիդատուրան (Բ.Մ.Հ հալվածքի համար): Ամբողջ այս խառնուրդը տաքացնում են 600—650° և պահում այս ատքության մեջ՝ մինչև սուրմայի և լիդատուրայի հալչելը: Լուծվելուց հետո հալվածքը խառնում են և մնացորդ $\frac{2}{3}$, կազարը հալվածքին են ավելացնում—հալվածքը ստուցնելու նպատակով: 550° տաքության ժամանակ հալոցքին են միացնում կաղմին և անագը և, իբրա լավ խառնելուց հետո, 500° տաքություն ունեցող հալոցքը լցնում են կաղապարները:

ՀԱԼՎԱԾՔՆԵՐԻ ԿՈՐԱԳԻԾԸ

Մետաղներն ու հալվածքները (սոլան) բյուրեղային նյութեր են: Նյութի բնությունն ամենից լավ կարելի յե վարոշել նրա բեկ (ածքից Անձեւ (ամորֆ) մարմինները խեցածե բեկվածք ունեն—կոր մակերեսներով: Բյուրեղային մարմիններն ունեն հատիկածե բեկվածք: Այդ առաջանում է նրանից, վոր բյուրեղները տարբեր ուղղություններում՝ տարբեր հատկություններ ունեցող նյութեր են, մարմին մանրագույն մասերը՝ ատոմները—բյուրեղի մեջ զասավորված են վորոշ ուղղությամբ, վորը պայմանավորում է բյուրեղի տարբեր հատկությունները—տար-

բեր ուղղությաւններով։ Որինակ՝ մի ուղղությամբ բյուրեղը հեշտությամբ կարող է կոտրվել, իսկ այլ ուղղությամբ գժվար է կոտրվում։ Այդ առաջանում է նրանից, վոր բյուրեղի հատկությունները՝ տարբեր ուղղություններով—տարբեր են լինում (որինակ՝ փայլված)։

Ենք մետաղը հալված վիճակումն ե գտնվում, նա միապատճղ հեղուկ է։ Տաքության աստիճանն իջևնելով՝ հեղուկ վիճակում գտնված հալվածքը կորցնում է իր աաքությունը, և մի վորոշ ժամանակ անցնելուց հետո հալվածքի մեջ նկատվում են պինդ մասնիկներ։ Հալվածքի մեջ այդպիսի մասնիկները յերևում են միաժամանակ բայց կան մեծ քանակությամբ։ Տաքությունն ավելի իջնելով, այդ մանրագույն բյուրեղներն ակտում են աճել (մեծանալ) և հալվածքը հեղուկ վիճակից պինդ վիճակի յև փոխվում։

Ամեն մի առանձին մասնիկի շարքը մարմնի աճը կատարվում է վորոշ որինքով, և այն դեպքում, յերբ բյուրեղիի աճը խանգարող հանդամանքներ չկան, մենք ստանում ենք կանոնավոր արտահայտված արտաքին գծագրություններով բյուրեղներ։ Հալվածքի մեջ բյուրեղացումը միաժամանակ տեղի յն ունենում մի քանի կետերում, այդ պատճեռով և, հետագայում, բյուրեղներն ընդհարվում են միմյանց և խանգարում մեկը մյուսին՝ արտաքին ճիշտ գծագրություններ ընդունելու։


Ստիայն միայն նրանց արտաքին կողմն և այդպես փոփռվավում ներքին կառուցվածքը մնում է նույնը։ Մետաղի ստան կտրները (մասնիկները) շարունակում են աճել և ձևավորվել առանձին հատիկներով։

Այն հալվածքում, վորի մեջ մեկից ավելի մի քանի մետաղներ կան, գարցյալ կասածանան մետաղեր բյուրեղներ, և մետաղի պինդ կտորը դարձյալ մետաղի հատիկների մի զանգված կներկայացնի։ Սակայն հալվածքի մառչելու պրոցեսը և նրա կառուցվածքը, սառչելուց հետո, հալվածքի մառչելու պրոցեսը և ստացվում, քանի մաքուր մետաղինը պինդ վիճակում—ավելի բարդ և ստացվում, քանի մաքուր մետաղինը։

Յեթե մենք վերցնենք մաքուր մետաղը, հալենք ու հալվածքը ստացնում պրոցեսը նշանակենք դիագրամով՝ ուղղահայց գծով—տաքության իջնելը, հորիզոնական գծով—ժամանակի տևողությունը, ապա պրոցեսն այսպիս տեղի կունենա.


Ժամանակին անցնում է, մետաղը սառչում, տաքությունն ընկնում և և կորագիծն իջնում (նկ. 1, հատված (AB))։ Վորոշ ժամանակ անց՝ մենք նկատում ենք, վոր տաքության աստիճանն այլևս չի փոխվում։ Ժամանակն առաջ և անցնում, իսկ զերմաշափը զերմության նույն աստիճանն և ցույց տալիս։ Մեր դիագրամում այդ յերեկում և վորոշ հորիզոնական մակերեսով (BC), հետագայում զերմության աստիճանը նորից շարունակում է իջնել, և մեր կորագիծը նորից և իջնում հատու-

ված (ԾՃ): Այդ ժամանակ մենք նկատում ենք, վոր հալվածքն արդեն ամբացել է: Մեր ստացած կորագիծը ցույց է տալիս, վոր մաքուր մեռազը հալչում և վորոշ և հաստ օտուն ջերսության աստիճանում: Զանազան բաղադրությունների հալվածքի սառչելը ճիշտ հենց նույն ձեռվագի կարելի յե դիտել և փորձով վորոշել նրանց հալվածքի սկզբնական



ԺԱՐԱԿԱՎՈՒՄ

Նկ. 1. Թաքուր մեռազի սառեցման կորագիծը:



ԺԱՐԱԿԱՎՈՒՄ

Նկ. 2. Զանազան բաղադրությունների հալվածքների սառեցման կորագիծը:

և սառեցման ջերմաստիճանը: Վորեւե մարմնի հալվածքի հեղուկի մեջ պինդ բյուրեղի առաջանալուն զուգադիպում և հալոցքի թագնված տաքության մի վորոշ քանակի հայտնաբերում, վորը և կարճ ժամանակով դադարեցնում և ջերմաստիճանի իջնելը: Հալվածքի սառչելու այս դանդաղումը սառեցման կորագծի վրա նկատելի յե դառնում մի թեքածքով (նկ. 2, կետ A):

Կատարելով սառեցման փորձ այնպիսի հալվածքների, վորոնց մեջ յերկու մետաղ կտ, և վորոնք սառեցնելիս բյուրեղանում են առանձին առանձին, այդ մետաղներն իր մեջ տարբեր քանակով պարունակելով— մենք կստանանք սառեցման մի շարք կորագծեր և նրանցով վորոշենք հալվածքի սկզբնական ջերմությունը և նրա վախճանական ջրբռնթյունը:



Նշանակելով հալվածքի հալման սկզբի և վերջի ջերմաստիճաններն ուրիշ գիտագրամի վրա, վորտեղ հորիզոնական գծով տրված և հալվածքի բաղադրությունը, մենք կստանանք այսպիս կոչված «հալոցքի դրության» դիագրամ: Այս դիագրամները գործնական մեծ նշանակություն ունեն, վորովհետեւ հնարավորություն են տալիս վորոշելու ամեն

բաղադրության հալոցքի հալման սկզբի և վերջի ջերմաստիճանը: Այս ջերմաստիճաններից յնինելով՝ սահմանում են հալոցքի հալման և կազմակարների տաքացման ջերմաստիճանները: Յերկու մետաղներից բաղկացած հալվածքները, համաձայն սրանց կառուցվածքի, կարելի յերաժանիլ հիտեյալ հիմնական խմբերի:


1. Յերկու առանձին մետաղներ, փառեն հալված վիճակումն են գտնված, իստեւ են խառնված: Մառչելով՝ նրանք բյուրեղանում են առանձին-առանձին, և ամրացած հալվածքի մեջ առանձնացած վիճակումն են լինում: Որինակ՝ կապարային բրոնզը, պղնձի բաղադրությունը (հալվածքը) կապարի հետ: Նկարի վրա յերեսում և այդպիսի հալվածքի կառուցվածքը, վորտեղ այդ հալվածքի մեջ մտած մետաղները չեն խտոնված, վոչ հեղուկ և գոչ պիճակում: Մենք առանձնացված վիճակումն ենք տեսնում աղինձը՝ լուսավոր շերտով, կապարը սև շերտով (նկ. 3)

2. Յերկու մետաղները լինեա սար էերպով խառնված են իր-ը թի՛ հեղուկ յել թի՛ պիճա վիճա կում: Մառչելով՝ գոյացնում են այսպես կոչված պիճա լուծվածք պոք բյուրեղանում և բնչակես մաքուր մետաղը:

Այդպիսի հալվածքի մի կտորը ներկայացնում և մի զանգված տուածին բյուրեղացած համակա ների, վորոնք, ինչպես այդ նկատվում են կարի վրա, յերեսում են կանոնավոր բջիջների ձևով: Այդ կառուցվածքի որինակը տա մես և նկ. 4-ը: Այդպիսի պիճա վածքածքներ են ստացվում, յերբ սառչում և սուրճայի և անագի հալւ վածքածքներ են ստացվում, յերբ սոսչում և սուրճայի հալվածքը կազմում է վածքը: Անագի և օ-ից մինչև 10° սոսչում և սուրճայի հալվածքը կազմում է



նկ. 4. Յերկու մետաղների լինեա սարը խտոներդի կառուցվածքը:



Նկ. 5. Նվազեկառիկատիվ պիտոքամբ:

ա—ալֆայի պինդ լուծվածք: Մոտավորապես հավասար քանակով սուբմայի և անազի (ավելի ճիշտը՝ $40-45\%$ սուբմա) հալվածքն առաջցնում է թթետայի բյուրեղներ, վորոնք հայտնաբերվում են վորպես կանոնավոր, սպիտակ խորանարդիկներ: Այն հալվածքները, գորոնք պարունակում են 10% մինչեւ 40% սուբմա, կաղմում են միտժամանակ ալֆայի և բետայի բյուրեղներ:




Մեծ քանակությամբ անագ պարունակող Ե.83 բարբիտը բազկացած և ալֆա և բետա բյուրեղներից, այդ պատճառով և այդ բարբիտը կարենոր նշանակություն և ստանում:

3. Եթեկայ մետաղներ խառնվում են իրար նեղուկ վիճակում, չեն խառնվում պինդ վիճակում: Այս սխեմայով և կատարվում կապարսությամբ հարվածքների սառեցումը, վորոնք (կապարսությամա) հիմքն են կազմում կապարսությամա-անագային բարբիտների: Այն հալվածքները, վորոնք բաղդացած են հեղուկ վիճակում իրար խառնվող և պինդ վիճակում չխառնվող մետաղներից, դրանք առանձին հատկություն ունեն: Այսպիսի շատ հալվածքների մեջ կա մեկը վորաց մի բաղդադրության հալցըք, վորը մշտառու ջերմաստիճանում սառչում և ինչպես մաքուր մետաղը և պինդ վիճակում ոժտված և առանձին հատկությունը: Այդ հալվածքը կազմում և յերկու մետաղների մանրագույն կտրվածքներեց (բեկորիկներից), վորոնք հալցըքին շերտավոր տեսք են տալիս: Կոպարի և սուբմայի հալվածքների համար այդպիսի եղանակի հարվածքը հետեւյալ բաղդադրությունն ունի 87% կապար և 13% սուբմա, և հալչում և 2420°C -ում Փորձի միջոցով պարզված (սառեցման կորտածով, ինչպես նկարագրված և վերը) տարբեր բաղդադրությունների հալվածքների սառեցման սկզբի և վախճանական ջերմաստիճանները տրվում են գիազրասում (նկ. 5), միացրած հաստ գծերով:

Ը

ֆ

Ց



Նկ. 6. Կապար-սուբմա (ծաբությամա) հալվածքի կառուցվածքների սխեմաներ:

շ) եվտեկտիկ հալվածքի շերտերի մեջ սպիտակ սուբմայի բյուրեղներ կան:

թ) եվտեկտիկ հալվածք:

ց) եվտեկտիկ հալվածքի շերտերի մեջ կապարի և բյուրեղներ կան:


Այդ զիազրամի վրա ուղղահայաց գծով նշանակված են ջերմաստիճանները, հորիզոնական գծով՝ հալվածքի բաղդադրությունները: AB

և BC դժերի վրա նշված են հալվածքի սկզբի ջերմաստիճանները: DBE գիծը ցույց է տալիս եվտեկտիկայի սառեցման ջերմաստիճանը՝ 242°, այսինքն հալվածքների սառեցման վայմանը: Բոլոր այն հալվածքները, վորոնք ավելի մեծ քանակությամբ սուրմա կամ կապար են պարունակում, քան եվտեկտիկ բաղադրության հալոցքը, կտան մատադի այդ ավելցուկը մի ավելի բարձր ջերմաստիճանում և այն ժամանակ, յերբ հեղուկ հալվածքը կազմատանա առանձնացած մետադով, և նրա բաղադրությունը կհասնի եվտեկտիկի բաղադրության (87% կապար, 13% սուրմա), ամբողջ հալվածքը բոլորովին կստչի 242°-ում:

Այսպիսի հալվածքի կառուցվածքը կտարբեցվի եվտեկտիկ հալվածքի կառուցվածքից նրանով, վոր հալվածքի մեջ, բայց եվտեկտիկ շերտերը, կլինին սպիտակ սուրմայի բյուրեղներ կամ կապար և բյուրեղներ:

ԲԱՐԲԻՏՆԵՐԻ ԲԱՂԱՄԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱՄՔԸ ՅԵՎ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախորդ զլիքում մենք ծանոթացանք կապար-սուրմա և սուրմա-անագ հալվածքների (խառնաձույլ) կառուցվածքին, կապար-սուրմա և սուրմա-անագ հալվածքները կապարեն և անագեն բարբիտների հիմքն են կազմում:



Նկ. 7a և 7b. B-83 բարբիտի կառուցվածքի լուսանկարը:

Այժմ ծանոթանանք բոլոր ստանդարտ բարբիտների՝ B-83, B-MK, B-16, B-10 և B-C—կառուցվածքին,

B-83 բարբիտը պարունակում է 83% անագ, 11-12% սուրմա և 5-6% պղինձ: Ինչպես տեսանք, անագի և սուրմայի 11-12%


իսառնուրդի հալվածքը կտղմված ե ալֆայի բյուրեղների պինդ լուծությթից և բետա բյուրեղներից, վորոնք հայտնաբերվում են վորպես սպիտակ բարանարսիկներ: Նկար 7-ա և Ե-83 բարբիտի կառուցվածքի բուսանկարն եւ Սեվ մասն ալֆայի բյուրեղներն են, սպիտակ քառակուսիները—բնտա բյուրեղներն են, վորոնք պարունակում են մատագորածն հավասար քանակի սուրճա և անագի: Մանր ու սպիտակ քառանիկների և աստղերի ձևով բյուրեղներն արդյունք են պղնձի և անագի քիմիական բաղադրման:

Ե-83 հալվածքի սառեցման ջիրմաստիճաններն են՝ 390° —հալվածքի սառեցման սկզբը, յերբ հայտնաբերվում են պղնձի և անագի քիմիական բաղադրության բյուրեղները. 266° -ում յերեսում են բնատքությունները. 236° -ում հայտնաբերվում են ալֆա բյուրեղները:

Բարբիտ պատրաստելու պրոցեսը բավական պարզ ե և կայանում է հետևյալ առանձին պրոցեսներից. 1) մասնակից մետաղների զառմից, 2) սիջանցուկ հալցցքի պատրաստումից (պղնձի և սուրմա), 3) բարբիտի պատրաստումից և 4) հալված բարբիտը կաղապարների մեջ լցնելուց: Բարբիտը պատրաստելու համար սուրբրաբար վերցնում են մաքրած պղնձների մեջ մինչև $99,5\%$, մաքրուր քիմիական պղնձի հա պտը վերցնում են ալագիրյան կամբիդերովլյան, վորոնց մեջ մինչև $99,7\%$ մաքրուր քիմիական կաղապար եւ Անագը մինչև որս դեղորաց չափով ներմուծվում ե արտասահմանից: Անագ շատ կա թու զիվիայում, Ավստրալիայում, Մուլակիայում, Մալայայում և Մալայան Արշիպելագություններում: Խորհրդային Միությունում էլ անագ շատ կա Ռուսաստանում (Զարայկալ):

Բարբիտի համար գործածվող անագի մեջ $99,9\%$ մաքրուր քիմիական անագ պիտի լինի: Սուրման ել մոտ քանակությամբ ներմաւծվում ե արտասահմանից: Նրա մաքրությունը հավասար պիտք ե լինի $99\%_0$ իւ:

Բարբիտ պատրաստելու պրոցեսը շատ բարդ չի: Ակզրից պատրաստում են պղնձի և սուրմայի հալվայի հալցցքը, վորի մեջ $50\%_0$ պղնձի և, իսկ $50\%_0$ սուրմա: Այդ հալցցքը պատրաստում են «Մեշտա» տիպի վա-



Նկ. 8. Կապար-սուրմա եվտեկաիկը, սուրմայի սպիտակ բյուրեղները և պղնձի և սուրմայի քիմիական միաց ման ասեղները:

ռաբուններում: Ակզրից վառարանը տաքացնում են և հետո լցնում են հալոցքի մեջ 250 կգ պղինձ, յերբ պղինձը հալչում է, սկսում են ավելացնել սուրման: Սուրման լցնելիս 4—5% ավելին վերցնում, վարովածներե սուրման հակում ունի պոլորշիտնալու և կորուստ տալու: Հալիլու տեսողությունը 2 ժամ և տեսում: Յերկու ժամ տեսողությամբ հալիլուց հետո ավելացնում են համապատասխան քանակությամբ անապ, նայած թե ինչ մարդայի բարբիտ պիտի պատրաստվի:

Հալիլածքի առանձին բաղադրությունների պնդություններն են ըստ Շարի:

Կտղարի և սուրմայի եվտեկտիկը 10

Սուրմայի բյուրեղներինը. 50

Պղնձի և սուրմայի քիմիական միացման բյուրեղներինը. . 88

Կտղար-սուրմա-անագային բարբիտները, բացի Բ-С բարբիտի մեջ մտնող մետաղներից, անագ ել են պարունակում: Հալիլածքում գտնված բոլոր մետաղներից անագն ամենից ավելին յե ձգուում դնապի սուրման, և հալվածքը սառչելուց անազը սուրմայի հետ միացած և դատվում, վորպիս մեկ ամբողջություն, բետայի բյուրեղների ձևով: Այս ընտարյուրեղները միենույն բաղադրությունն ունեն, ինչ Բ-83 բարբիտում: Այդ պատճառով և կտղար-անագային բարբիտների արտաքին կտառուցքածքը գոչը գոչնչով չի տարբերվում:

Բ-С բարբիտի կտառուցքածքից:

Մետաղի հիմնական զանգվածը (մասսան) եվտեկտիկան եւ հալման 242°-ով, պնդությունն ըստ Շորի՝ 14 եւ եվտեկտիկի մեջ են մտնուած բետա բյուրեղները—ամբողջունը 40, և պղնձի ու սուրմայի քիմիական միացման ասեղները: Սրանց ամբողջունն ե 88:

Հալիլածքին ավելացրած անագը բարձրացնում ե եվտեկտիկի դիացկունությունը և առաջ և բերում բետայի մեծ քանակություն պինդ և այլ տեսակի բյուրեղները: Այդ պաճառով և կտղարա-անագային բարբիտներն

Նկ. 9. Կտղար-անագային Բ-16 բարբիտի կտառուցքածքի լուսանկարը:

ավելի դիմացկուն և ամուր են կտղարային բարբիտներից: Նկ. 9-ը կտղար-անագային Բ-16 բարբիտի կտառուցքածքի լուսանկարն եւ:

Կապարա-անագային բարբիտների ճգնաժամային ջերմաստիճանները
ընդունած են № 4 աղյուսակում:

Աղյուսակ № 4

Հալվածքի մարկտն	Հալվածքի սառեցման մկնդը	Բնաւ բյու- րեների զատկելը	Հալվածքի սառեցման վերջը
Բ-16	5100	2620	2420
Բ-10	4160	2530	2420
Բ-ՄԿ	3850	2500	2420

Իր բաղադրությամբ ավելի բարդը և կապար-անագային բարբիտներից լավագույնն է Բ-ՄԿ բարբիտը, վորը պարունակում է 11—12% սուրճա, 11,12% անագ, 1,5% (պղինձ), 1,5% կաղմի և 1,5% մկնդեղ: Այս հալվածքի մեջ նոր մետաղներ են հանդիսանում մկնդեղն ու կաղմին: Այս մետաղների աղջեցությունը հալվածքի կառուցվածքի վրա հնատեյալն է:

Մկնդեղն ընդունակ լինելով լիովին լուծվելու և սուրմայի և անագի մեջ—թե հեղուկ և թե պինդ վիճակում—կազմում և յերեք տեսակի պինդ լուծույթ այս մետաղների հետ՝ առաջացնելով բետայի բյուրեղներ:

Հալվածքի մեջ մկնդեղի ներկայության շնորհիվ պինդ բյուրեղների հատիկների մեծությունը խիստ փոխվում է: Հալվածքի կառուցվածքը դառնում և մանր բյուրեղային: Դեռևս հեղուկ հալցցում առաջանում ան միաժամանակ ավելի քանակությամբ կետեր, քան մկնդեղի հարգածքներում, վորտեղ սկսում են ճեավորվել բյուրեղները, և դրա շնորհիվ հալցցքը մանրահատիկ կառուցվածք և ունենում: Այս մկնդեղ-կաղմիի բարբիտի ամենակարևոր հատկությունն է: Այսուղ մենք կհիշենք միայն Բ-ՄԿ բարբիտի հատուկ բաղադրության աղջեցությունը բարբիտի կառուցվածքի վրա:


Բ-ՄԿ բարբիտի մեջ մտնում է կաղմին, լուծվելով կապարի մեջ՝ ամրացնում և հալվածքի հիմնական մասսան և, բացի այդ, քիմիակեռ միանալով սուրմային (պինդ, գորշ բյուրեղների ձևով) նույնպես բարձրացնում և հալվածքի պնդությունը:

Վերջացնելով բարբիտների կառուցվածքի մասին մեր խոսքը՝ անհրաժեշտ և մատնանշել նույնպես նրանց մի այլ խմբավորումը:

Այդ խմբավորումը կապար-անագային զոգման խմբավորումն է:

Նկար 10-ը պատկերում է կապար-անագային հալվածքների կառուցվածքի գիագրամը: Դիտելով այդ գիագրամը՝ մենք տեսնում ենք, վոր սովորական յերեքյակը (որետիկ) իր մեջ պարունակում և առագ՝ 64% մնացածը կապար-ելտեկտիկ հալվածք և, վորը հաշում և առագի հալման ջերմ աստիճանից ցածր՝ 180 անդուիդի ջերմաստիճանում:

Յերեքյակի այս ցածր և անփոփոխ ջերմաստիճանում հալչելն այդ հարցքին տալիս և գործնական առավելություն մյուս հալվածքների հակառամբ:



Նկ. 10. Կապար-անագ հալվածքների կառուցվածքի դիագրամը:

30%-անոց աղքատ յերեքյակը հալչում և արդեն $180^{\circ}-260^{\circ}$ ջերմաստիճանում և ավելի պակաս գործնական եւ Բացի այդ, մեծ քանակությամբ կապար պարունակելով իր մեջ—ավելի յէ հալված թըթվուտանալու:

Մանոթանալով բարբիտների կառուցվածքին, մենք նկատում ենք, վոր բոլոր անտիֆրիկցիոն բարբիտները միատեսակ կառուցվածք չունեն, այսինքն՝ նրանք կազմված են տարբեր տեսակի բյուրեղներից, փորոնք ունեն տարբեր պնդություն և հալչում են տարբեր ջերմաստիճաններում:

Անտիֆրիկցիոն հալվածքների այսպիսի կառուցվածքը պատահական չե, այլ բղխում ե բարբիտների աշխատանքի պայմաններից:

Բարբիտների հիմնական նշանակությունն ե՝ պաշտպանել պոզդատելի սինոր վնասվելուց յեզ արագ մաշվելուց: Իր գանազանակերպ կառուցվածքի շնորհիվ բարբիտն ընդունակ է հարմարվելու լիսերի շվվող մակերեսին: Հատկապես բարձր ճնշման ժամանակ սուրմայի կամ սուրմանագի (բետագի) պինդ բյուրեղները իրվում են փափուկ հիմքի մեջ (կվատեկտիլ կապարային բարբիտներում կամ ալֆայի ամուր լուծույթն անտագային բարբիտներում) և այսպիսով բարբիտը հալվածվում է լիսերին առանց բարձր շիռում առաջ բերելու:

Մյուս կողմից բարբիտը պիտի ապահովի յուղումը շփման ժամանակ, վորովհետեւ անհրաժեշտ է, վորպեսզի առանցքակալը կանոնավոր աշխատի: Այս հատկության վրա ազգում ենակ հալվածքի վոչ միատեսակ կազմը: Պինդ և փափուկ բյուրեղները տարբեր ձեռվ են մաշվում: Դրանորհիվ աշխատանքի ընթացքում (պրոցեսում) փափուկ հիմքն առագ է.

մաշվում, պինդ բյուրեղները մի փոքր բարձր են մուռմ փափուկ հիմքից, և բարբիտի վողջ աղխառանքային մակերեսը ծածկ լում ե փողակների ցանցով, վորոնց մեջ մաղային (մաղանոթային) ուժերի ազդեցության շնորհիվ պաշտպանվում է յուղը:

Բացի այդ, բարբիտը սովորական և բարձր աստիճանում պիտի վարող պնդություն և դիմացկունություն ունենա, վոր դուրս չմղվի պահանդի միջից լիսերի մնշման ազգեցության ներքո:

Այսպիսով, տարբեր բարբիտների հատկությունները համեմատելու համար, փորձում են հալվածքների պնդությունը սովորական և բարձր ջերմաստիճանում, սեղմումը սովորական և բարձր ջերմաստիճանում հաշվածքի պլաստիկ հատկությունը (բարձրորակությունը) ստուգելու և նույն շիմման հատկությունները պարզելու համար:

Բարբիտների մեխանիկական և այլ հատկությունների աղյուսակում (№ 5) ցերված են հալվածքների սառեցման սկզբի և վախճանական ջերմաստիճանները: Այս այն ջերմաստիճաններն են, զորոնցից յենելով սահմանում են պահանդիների կաղապարների և լիցքի ու տաքության ջերմաստիճանները, հալվածքների պնդությունն ըստ բրինելի՝ տարբեր ջերմաստիճաններում և հոսունության վախճանը-սովորական և բարձր ջերմաստիճաններում: Հոսունության սահման (վախճան) են անվանում արև բեռնավորումը, յերբ սեղմումի ժամանակ նյութն սկսում ե տափակել:

Բարբիտների մեխանիկական յեկ այլ հատկությունները

Աղյուսակ № 5

Բարբիտի մարկան	Բարբիտի սառեցման սկզբի ջեր- մաստիճանը	Բարբիտի սառեցման գերջին ջեր- մաստիճանը	Պնդությունը տարբեր ջերմաստիճաններում				Հասունության սահմ. կզ. ներում		
			250	500	750	1000	250	750	750
Ե-83	390	236	29	25	20,5	16,2	7,6	3,3	
Ե-ՄԿ	385	242	26	24	21	16,5	7,6	3,5	
Ե-16	510	242	30	25	20	15	8,4	4,8	
Ե-10	416	242	28	24	19	13	8,0	4,2	
Ե-С	428	240	22	16	12	10	5,0	3,0	

№ 6 աղյուսակում բերված են անտիֆրիկցիոն հատկությունների շփման գործակիցը տարբեր ջերմաստիճաններում և փորձի տևողության թվերն ըստ պրոֆեսոր Զայցելի („Տառօսե բաճառու“ գրքից):

Փորձերը կատարված են հետեւյալ պայմաններում: արագությունը՝ 13 մետր մեկ վայրկյանում, բեռնվածությունը 3,2 կգ/սմ²: Մեծ արտության ժամանակ կատարված այդպիսի փորձը բարբիտի բարձր հատկությունները, վորոշելու ամենալավ միջոցն ե:

Անապային և կտապարային բարբիտների լաբորատորական փորձերի արդյունքները խիստ դրական են Բ-ՄԿ բարբիտի նկատմամբ:

Նորմալ ջերմաստիճանում Բ-ՄԿ բարբիտն ավելի ցածր պնդություն է ունենում, քան Բ-83 բարբիտը, և, ընդհակառակը, ջերմաստիճանը բարձրանալու դեպքում Բ-ՄԿ բարբիտի պնդությունն ավելանում է Բ-83-ի հանգեց:

Բարբիտների անհիմրիկցիոն նաևկուրյաւնները

Աղյուսակ № 6

Բարբիտի մարկան	Ամենաբարձր ջերմաստիճանը	Եփման տարրությունը	Եփման դորձակեցը		Փորձի անողության ժամերությունը	Նընթարությունների աղյուսակ
			Ամենաբարձր պածը	Ամենաբարձր բարձր պածը		
Բ-83	730	560	0,017	1,022	11	Փորձը կատարված է Զայցենի մեքենայի վրա պարզաբանելու արագությամբ:
Բ-ՄԿ	700	470	0,013	0,020	12	Նայի վրա պարզաբանելու արագությամբ:
Բ-16	720	530	0,017	0,022	10	Ամենաբարձր արագությամբ:
Բ-10	900	670	0,032	0,034	1,5	13 մետր ($\frac{1}{3}$ լ այլ կյանություն), բեռնվագական ծովագությունը՝ 23 կգ սարչական աղյուսակի մեջ:
Բ С	920	700	0,026	0,036	1,0	Ճերմակագությունը՝ 23 կգ սարչական աղյուսակի մեջ:

Եփման փորձում առաջին տեղը բռնեց դարձյալ մինդեղ-կազմի բարբիտը-դիմացագ ավելի յերկար ժամանակ, համեմատարար քիչ տաքսացագ և հայտնաբերեց շիման նվազագույն գործակից:

Բ-ՄԿ բարբիտի այսպիսի հատկությունը նրա հատուկ բազայի բարբիտներից ե առաջ գալիս: Հալվածքի մանր բյուրեղային կառուցվածքը, վոր բարձրացնում ե նրա անտիֆրիկցիոն հատկությունները, վորոնց շնորհիվ հալվածքը լավ ե պահպանում հատկապես յուղում, արդյունք ե հալվածքի մեջ մինդեղի ներկայության: Բարձր ջերմաստիճանում հալվածքի դիմացականությունը կազմի ներկայության շնորհիվ ե առաջանում: Հալվածքի մեջ մտած մինդեղը հալվածքին մանրաբարյուրեղ հատկություն ե տալիս և հալվածքը պակաս զգայուն ե լինում տարբեր ջերմաստիճանի ուժիմիկ ժամանակ—բյուրեղների խոշորության նկատմամբ, քան մյուս բարբիտները: Ստորև բերված են Բ-83 (նկ. 7) և Բ-ՄԿ (նկ. 11) հալվածքների կառուցվածքների լուսանկարները: Հալվածքների լիցքը կատարված ե միատեսակ պայմաններում: Բնկ նկ. 12-ում ցույց ե տրված բարբիտի Բ-ՄԿ-ն սառը կազմապարի մեջ լցված:

Բ-ՄԿ բարբիտի բյուրեղացումն ավելի նվազ ե, քան Բ-83-ինը, և այդ նվազությունն անփոփոխ ե մնում լիցքի և կաղաղարի ջերմառանը փոփոխելիս (նկ. 11—12):

Բացի այդ, մինդեղը բարձրացնում ե հալվածքի շարժունակությունը՝ հեղուկ զիճակում, և հետևապես հալվածքն ընդունակ ե դառ-

Նուև կաղապարի մեջ լավ տեղափորվելու: Այսպիսով Ե-ՄԿ բարբիտի գրական հատկություններն են՝ մանր կառուցվածքը, վորի շնորհիվ հալվածքը լավ անտիֆրիկցիոն հատկություններ և ձեռք բերում—դանդաղորեն սառչելու հատկությունը՝ տաքացնելու զեղչում և նվազ զգայնությունը $450 - 550^{\circ}$ ջերմաստիճանի ինտերվալներով՝ հալվածքի համար և $0 - 200^{\circ}$ կաղապարի համար, բյուրեղի մեծության նկատմամբ:

Ե-ՄԿ—բարբիտի թույլ կառուցվածքն ե, նրա փոփոխությունը և հալվածքի մեջ կապարի մեծ քանակությունը: Կապարը մի մետրով ե, վորն ավելի յէ հակված թթվուտանալու, քան անագը, այդ պատճառով և այդպահությունը կապարացին հալվածքի կամայական:


Նկ. 11. Ե-ՄԿ բարբիտի կառուցվածքը լուսանկարը

Վածքի կամայական:

Հաշվի առնելով Ե-ՄԿ բարբիտի վերը նկարագրված հատկությունները, նշենք հալման ու լիցքի պրոցեսի հետևյալ հիմնական մոմենտները:


1. Հեղուկ հալվածքը միատեսակ պիտի լինի, բյուրեղների մանրագույն սազմեր չպիտի պարունակե, վորպեսդի հալվածքը միատեսակ մանր կառուցվածք ունենա:

Բացի դրանից, հալվածքը պիտի ունենա վորոշ քանակության պահանջմանը ջերմություն, վոր կարողանալ հալիցնել պահանջի վրայի զոդման շերտը և լավ լցնել կաղապարի բոլոր անկյունները: Այդ պահանջականի ե բոլոր բարբիտիների նկատմամբ առաջարկվում ե հալվածքը առաջացնել լիակատար հալման ջերմաստիճանի՝ 50° -ից ավելի: Ե-ՄԿ բարբիտի լիցքը ջերմաստիճանն առաջարկվում ե անել 450° : Այդ շեր-




Նկ. 12. Ե-ՄԿ բարբիտի կառուցվածքը
(բարբիտ լցրած սառը կապարի մեջ):


1409



900



805



շուրջյամբ սոց-գյուղատնտեսության մեխանիզացիայի Համաժուռթեանկան ինստիտուտը կատարել է լիցքի բազմաթիվ փորձեր՝ նպատակ ունենալով մշակել լիցքի սացիոնալ տեխնիկան։ Այդ փորձերի հիման վրա յել մշակված են շարժիչ առանցքակալների լիցքը կատարելու տեխնիկայի մնաթողները։ Լիցքը կատարելու համար մատանաշշված ցուցումներն ու տեխնիկական միջոցներն ապահովում են առանցքակալները բոնդրատ-բարբիտով լցնելու գործը, տալով բավարար հետեանքներ։ Բացի դրանից, այսուղ բերված են նաև կարևոր տեղեկություններ բարբիտոների վերաբերյալ, ցուցումներ բանվորական կետերի գործիքների և աշխատանքի սարքավորման մասին։

ԲԱՐԵՒՏԻ ԴՐՈՇՄԱՆՆՈՒՄԸ (ՄԱՐԿԻՐՈՎԿԱՆ)

Բարբիտը ձուլում են սրանդարտ չափերի կտորներով, վորոնց քաշը 8 և 4 կիլոգրամ եւ Բարբիտի սատանդարտ կտորը կնքված է ձուլվածքը կառարող գործարանի դրոշմով. տյապեա՝ ՄԳՍ բարբիտ, լուզ բարբիտ ՄԳՍ-ը Մուկվայի Պետական Ռւտիլիզացիոն գործարանն ե, լուզ-ը՝ Լենինգրադի Ռւտիլիզացիոն գործարանը։

Կտորի տակը դրոշմված ե լիցքի համարը և բարբիտի մարկան՝ Բ-83, Բ-ՄԿ, վորը նշանակում ե մկնդեղ և կաղմի պարունակող բարբիտ, կամ Բ-83 նշանակում ե 83% անագ պարունակող բարբիտ։

345-ը բարբիտի ձուլվածքի համարն ե։

Բ-ՄԿ կամ Բ-83-ը բարբիտի մարկան ե։

ԱՌԱՑՔԱԿԱՆՆԵՐԻ ԼԻՑՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՏԸ

Առանցքակալների լիցքը կատարելու նպատակին ծառայող բանվորական կետը պիտի ունենա հատուկ դադայան (նկ. 13), վորը հարմաշեցված պիտի լինի առանցքակալների լիցքը նպատակահարմար ձևով կատարելու պահանջներին. դադայանը պիտի ունենա արկղներ, վորոնց մեջ պիտի պահպին հարկավոր գործիքները, պահանջներ, շարժանակներն ու բարբիտի թափվածքները. Այն դադայանը, վորի վրա յե կտառարկելու բարբիտի լիցքը, պատաճ պիտի լինի յերկաթե թիթեզով, այն նպատակով, վոր դադայանը մաքուր պահպի և պատահականորեն դադայանի վրա թափված բարբիտի մանր կտորները չաղոտութեն և հավաքելիս մաքուր լինեն։

Բանվորական կետի վերելք—գաղերն ու ծուխը դուրս դնալու համար—խողովակավոր գլխանոց պիտի լինի շինված։

Լիցքը կատարելու նպատակին ծառայող բանվորական կետն առանցքանոցում այնպիսի կետ պիտք ե լինի, վորը բավարար չափով լույսով պահպիված լինի։

Առանցքակալների լիցքը կատարելուն անհրաժեշտ գործիքներն ու աղաղաքներն—ամեն մի ոպերացիան կատարելու համար—բավարար քանակով պիտի լինեն, զորպեսզի նույսափենք աշխատանքն անտեղի պատճառներով ընդհատելուց:

ԳՈՐԾԻՔՆԵՐ, ՍՊԱՍՔՆԵՐ ՈՒ ՊԱՐԱԳԱՆԵՐ

1. Հալոցի լամպ և հալոց (տիգելի)	1 կողմիկա
2. Զողիչ լամպ, 1 լիտրանոց	2 համար
3. Շարժանակի առանցքակալների ու պահանդների լիցքը կատարելու համար—սպասք, լրիվ կոմպլիկտով (թիմետ կամ հեմպիլուսպլիկ տիպի)	1 համար
4. «Փազ» ավտոների բլոկների լիցքը կատարելու համար տակդիր—	1 համար
5. «Փազ» ավտոնորիների բլոկի հիմնական առանցքակալ- ները բարբիտով լցնելու սպասք	1 համար
6. Մամլակ (տիսկա) գուղահեռ, 125 մմ.	1 »
7. Պիրոմետր կամ հրաշափ C-ի 600°-ի	1 »
8. Պահանդները մամլակներում բռնելու հարմարանք	4 »
9. Մոշպիլ (տորվիչ)	1 »
10. Տափակ խարտոց 300 միլիմետրանոց	1 »
11. Կիսակլոր խարտոց	1 »
12. Մուրճ 800 գրամանոց	1 »
13. Առանցքակալների ձայնն ստուգելու համար մնել ժուրճիկ 200 գ.	1 »
14. Մետաղի սղոց, խոշոր ատամով	1 »
15. Կլայեկելու (անազելու) թիտկ	1 »
16. Գազը բարբիտը լցնելու համար	2 »
17. Ազրեստե խողանակ՝ առանցքակալները մաքրելու համար 1	»
18. Պողպատե խողանակ՝ «կոշտ» մաքրումը կատարելու համար	1 »
19. Քերիչ (ամեր) տափակ	1 »
20. Ցեռեղը (լեռակողմ) քերիչ	1 »
21. Պահանջր դրսի կողմից բռնելու գործիք	1 »
22. Բռնիչ՝ կափարիչը բռնելու համար	1 »
23. Բռնիչ ներսի՝ պահանջրի համար	1 »
24. Բռնիչ պահանդների լիցքն ըստ ձայնի ստուգելու համար 1	»
25. Ստուգիչ սալ (ոլուտա)	1 »
26. Զողիչ՝ 200 և 400 գրամանոց	2 »
27. Ածուխը մաղելու մտղ	1 »

28.	Կերպարքնը քիլտրելու ցանցիկ	1 համար
29.	Թվանիշների և տառերի կոմպլեկտ՝ զբոշմանշումը կատարելող համար	1 կոմպլ.
30.	Ասեղներ լամպերի համար	1 >
31.	Շաքժանակ և պահանջներ հին բարբիտը հալիք-հանելու տակդիր	1 համար
32.	4 կիլոգրամանոց կուան	1 >
33.	Շաքլոն՝ պահանջներն ստուգելու համար	1 >
34.	Ցիրկաթե սալ կամ զնդան—բարբիտը կոտորելու համար	1 >
35.	Թիթեղե վաննա—հալված բարբիտը հավաքելու համար	1 >
36.	Կաղապար՝ անկյունավոր, յերկաթից, յերեքյակները (որբենիկ) — (յերեքյակ-կոչվում և այն խառնուրդը, վորի մոտ $\frac{2}{3}$ մասն անտառ և, մացածը կապար, ձողանեն ձուլելու համար	1 >
37.	Ամաններ՝ բարբիտի թափվածքները, ձուլելու համար	2 >
38.	Դույլ	1 >
39.	Նավթի աման (բիտոն)	1 >
40.	Ապակե անոթ—թթվուտը խածառելու համար	1 >
41.	Ճենապակե կամ ապակե զավաթ՝ նաշտաիրի համար	1 >
42.	Քավաթիկ, թթվուտի համար	1 >
43.	Վրձիններ	2 >
44.	Հրամար (օրհետաշտելե) — կրակը մարող սպասք	1 >
45.	Արկղ՝ ավազով	1 >
46.	Դեղերի պահարան՝ այրվածքներն ապացինելու համար	1 >
47.	Խալաթ՝ աշխատողի համար	1 >
48.	Թաթպաններ	1 դույլ

Սաներարյուն.—Խոշոր առանցքակալների լիցը կատարելուու ժամանակ անհրաժեշտ և ունենալ 15 կգ տարողության հարցը և լիցը կատարելու համար հատուկ հարմարանքներ:

ՆՅՈՒԹԵՐԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Լիցը կատարելու համար նախ պիտի պատրաստել անհրաժեշտ նյութերը բարբիտը պիտի մաս-մաս անել, ամեն կտորը մինչեւ 2 կիլոգրամէ բարբիտը պատրաստ ունենալ այնքան, վորքան անհրաժեշտ և մի որվա աշխատանքը համար:

Յերեքյակն անկյունարդի մեջ պիտի լցնել և ձուլել ձողերի ձևով:

Աղաթթվուտը պիտի պահել ապակե մաքուր անոթի մեջ:

Թթվուտի խածառումը պետք է կատարել — ամանի մեջ դցելով բինկի կառներ կամ ձողեր, վորոնց քաշը 20 դրամից ագել չպիտի:

Ամենը չպիտի ծածկել (բաց պիտի պահել) մինչև ջրածնի ուղար-
ջակննը յերեալը:

Մանրացած փայտածուխը պիտի մաղել վայտածիսի զործադրվող
հասիկները պիտի լինեն 5—10 միլիմետրից վոչ ավելի մեծության։ Կե-
րոսքնը ֆիլտրացիայի պիտի յենթարկել վոր չինի թե նազթի մեջ
ընկած աղոտոտությունները (թելիկներ, ավազ, փոշի և այլն) լամպի
անցքերը կեղտոտեն։

Նաշառիրը պիտի մաքուր լինի և ապակե ամանի մեջ լցված։ Խառ-
նուրգներ (փոշի, մուր և այլն) չպիտի ունենաւ։

Եարժանակների և պահանջների միջի յուղատար անցքերը զոցելու
նպատակով, լիցքը կատարելուց առաջ հարկավոր և պատրաստ ունե-
նալ թելավոր կամ թիթեղաձև աղբեսաւ։

«Սալիկնեց» տրակտորի խոշոր առանցքակալները լցնելու համար
անհրաժեշտ ե բավականաչափ մածիկ (գաճառկ) — առանցքակալների
կտղառարին թույլ հպվող տեղերը մածիկելու (ծեփելու) համար։

Մածիկի բաղադրությունը

Վառարանի կավ	· · · ·	65	տոկոս
Սովորական աղ	· · · ·	17	»
Չուր	· · · · ·	18	»

Հաղամենը 100' »

Դադարիանը սրբել չորացնելու, աղտոն ու կերոսինը մաքրելու համար
հարկավոր են փալասներ։

ԱԹԱՆՑՔԱԿԱԼՆԵՐԻ ԼԻՑՔԻ ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Առանցքակալների լիցքը կատարելու ոպերացիաները խմբավոր-
վում են այսպես.

ա) լիցքը կատարելու նախապատրաստություն։

բ) լիցք.

գ) մշակում լիցքն ավարտելուց հետո։

2. Առանցքակալների լիցքի ոպերացիաները ուսցիունալ յեղանակով
կատարելու նպատակով՝ անհրաժեշտ ե, վոր ոպերացիաների վերը ժամա-
նանշված հաջորդականությունը պահպանվի, անկախ այն բանից, թե
լիցքը կատարողը մի հոգի յե արյուք, թե ունական ունի։

Առանցքակալների լիցքը կատարելու ոպերացիաների տեխնոլոգիա-
կան հաջողությունը — յուրաքանչյուր մեկ բանվորական կետի վերա-
բերյալ։

Առջին բանվորական կետ՝ նախապատրաստության լիցքը կատա-
րելու համար։

ա) սուուղել և տեսնել, թե շարժանակն ու պահանդը պատրմած են
հետագա աշխատանքի համար, թե վոչ:

բ) առանցքակալի կամ պահանդի հին բարբիտը հալելով զուրո
հանել:

գ) անազել

դ) հանձնել յերկրորդ բանվորական կետ՝ լիցը կատարելու համար:
Մաճորսի բյուն.—Պահանդները չունեցող շարժանակներն առա-
ջին բանվորական կետ պիտի հանձնվեն նախապես ստուգված և
ուղղված:

2. Այս գեղքում, յերբ առաջին բանվորական կետն են հան-
ձնվում շարժանակների կուսակելտներ, առաջին գործը պիտի լինի
շարժանակները քանդել:

3. Շարժանակներն ու միջադիրները բանվորական կետ պիտի
հանձնվեն նախապես մաքրված, լվացված: Յեթե լվացումը շարժա-
նակներն ու պահանդները բավարար չափով մաքրելու հնարավո-
շություն չի տա, ապա առանցքակալները պիտի լվանալ գան-
հայում տաք ջրով, և ապա վողակել նաև տաք, մաքուր ջրով:

ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՏ-ՇԱՐԺԱՆԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՀԱՆԴՆԵՐԻ ԼԻՑՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

1. Բարբիտը հալել:
2. Սպասքի միջուկը (սրտիկը) տաքացնել:
3. Պահանդը տաքացնել:
4. Լիցը կատարել:
5. Պահանդը լիցքից հետո սպասքից դուրս տանել:
6. Լիցքի վորակն ստուգել:
7. Հետեյալ բանվորական կետը հանձնել:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՑՔԱԿԱԼՆԵՐԻ ԼԻՑՔԸ ԿԱՏԱՐԵԼԸ

1. Բլոկը նեցուկին դնել ու ամբացնել:
 2. Անոթը նեցուկին դնել:
 3. Առանցքակալները լիցքի համար նախադարձուաստել:
 4. Լիցք:
 5. Լիցքի ծորանքները կարել:
 6. Սպասքները հավաքել:
- Մաճորսի բյուն.—Հիմնական առանցքակալների լիցքը պիտի
կատարել դադցահին անմիջապես մոտ այն տեղին, վորտեղ կա-
տարվում ե շարժանակները և պահանդների լիցքը, վորակեալի կա-
րելի լինի ոգտագործել միևնույն գործիքները:

ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՏ – ԱՌԱՆՑՔԱԿԱԼՆԵՐԻ ՄՇԱԿԵԼԸ
ԼԻՑՔՆ ԱՎԱՐՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ

1. Լիցքի ծորանքները կտրել:
2. Մաքրել:
3. Ջայնն ստուգել:
4. Ստուգում—սալի վրա:
5. Պահանջների նստվածքը շարժանակներին՝ ստուգել և ուղղել:
6. Շարժանակն ու միջադիրները հավաքել:
7. Դրոշմանշում:
8. Հանձնել հետևյալ բանվորական կետ:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԼԻՑՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Բանվորական կետը հարկավոր և մաքրել—հեռացնելով այնտեղից մետաղատաշանքը, սղոցուկը, աղտը,
2. Լիցքը կատարելու նպատակով հարկավոր գործիքները և անոթները նախապատրաստել:

Պարզե՞լ, թե բոլոր գործիքներն առկա յեն, և ստուգել գործիքների պիճակը:

Գործարար սպասքներն ստուգել—պահանդը կամ շարժանակը փորձի համար տեղը դնելով և ստուգելով նստվածքի հպվածությունը:

Պահանջներն ու շարժանակը սպասքի մեջ պիտի սեղմ նստվածքունենան, և լիցքի ժամանակ ըարբիտի ծորանք չպիտի առաջանա:

3. Սպասքն այնպես պիտի կարգավորել, վոր լիցքը կատարելուց հետո խառավածքը շերտի հաստությունը 3 միլիմետրից ավելի չընի:

4. Լիցքը կատարելուց առաջ անհրաժեշտ և շարժանակների պահանջների պիտանիությունն ստուգել:

5. Լիցքը կատարելու համար գործադրվող պահանդների մակերեսները ձեղքեր չպիտի ունենան, ծայրերը զնայաված կամ կողերը կտրտված պահանջներն անթույլատրելի յեն: Չի կարելի գործադրել դեֆորմացիայի յենթարկված, շարժանակին կամ շաբլոնին լավ չհպվող պահանջներ:

Չի կարելի գործադրել դեֆորմացիայի յենթարկված ժռված շանակներ և շարժանակի մեջ խորասուղվող պահանդներ:

Հին բարբիտը պետք է հալել զոդիչ լամպով, վորի համար շարժանակը կամ պահանդը պիտի դնել հատուկ նեցուկի վրա:

6. Առանցքականները լամպի բոցով զոդել կարելի յի միմիայն մինչեւ բարբիտի հոսելը և վոչ մի զեպքում շատ տաքացնել չի թույլատրվում:

7. Պահանջն ու շարժանակը հարկավոր և տաքացնել բարբիտը լըց ված կողմից:

8. Հալված բարբիտով լեցուն հալոցի մեջ հին պահանդների վրայի քարբիտը հալելու նպատակով պահանդները հալոցի մեջ խորառողեցի չի կարելի, վորովինետև դրանից պահանդների մակերեսը կարող է վնասվել իսկ յերենն (առանձին դեպքերում) հալոցի մեջ յերկար մասաւց պահանդները կարող են հալվել:

9. Հին բարբիտը հալելուց անմիջապես հետո պահանդներն ու շարժանակներն անմիջապես պիտի անազվեն՝ տաքացման ջերմաստիճաններն ոգտագործելու նպատակով:

ԱՐԱՆՑՔԱԿԱԼՆԵՐԻ ԱՆԱԳՈՒՄԸ

1. Պահանդի կամ առանցքակալի մակերեսի զրության և նբանց անուղղականության համար նախապատրաստելու նկատմամբ առընթերում են՝

ա) առանցքակալները, վորոնց վրայի հին բարբիտը հալված ե.

բ) առանցքակալները, վորոնք բարբիտ չունեն, բայց վորոնց մակերեսը սաստիկ աղտոտված ու ժանդուած ե.

գ) նոր առանցքակալները, վորոնք առաջին անգամ են լիցը ընդունում:

2. Անկախ առանցքակալների մակերեսների զրությունից՝ պարզապես են զանազան մեթոդներ նախնական մեխանիկական մաքրում և յուղաթափ կատարելու համար:

3. Ցեթե այն առանցքակալները, վորոնց միջից հալվելով դաւրս ե հանված հին բարբիտը, լիցքի ժամանակ գերատաքացած են, իսկ նախորդ լիցքի ժամանակ լավ են անազված յեղել, ապա հալոցը կատարելուց հետո առանցքակալների վրա կնստի բարբիտի հավասար, բարեկ շերտ: Ոգտվելով հալման տաքության ջերմաստիճանից՝ տնօրութեած մեջտեղ անմիջապես առանցքակալի մակերեսը քերելու մաքրել աղբեռուն խոպանակով և կամ մաքուր փալաններով, Այս միջոցով բարբիտից կիհռացվեն սուրմայի և պղնձի հատակաւ բյուրեղները, և առանցքակալն անազված կլինի: Հարկավոր կլինի առանցքակալի մակերեսը թեթև կերպով թարմացնել՝ ավելացնելով յերեքյակը:

4. Անազման համար գործադրվում է յերեքյակ (որեմնակ) հետեւյալ բազապրության.

Անագ	64 %
Կապար	36 >
	100 >

Հալոցը ջերմաստիճանն ըստ Ցելսիի 180° պիտի լինի:

5. Այն առանցքակալները, վորոնք չունեն բարբիտ, բայց վորոնց մակերեսը սաստիկ կիղոտովված և ժանդուած ե, պիտի.

ա) ժամանակից լավ մաքրվեն մետաղեր խողանակով կամ քերիչով.

բ) յուղաթթափ արվեն և լվացվեն-մաքրվեն: Յուղաթթափումը պեսաք և կառարիկ կառւստիկ սողայի լուծույթի մեջ: Լուծույթի բաղադրությունն են կառւստիկ սողա— $10^{\circ}/_0$, ջուր— $90^{\circ}/_0=100^{\circ}/_0$, Յուղաթթափումն ավարտելուց հետո առանցքակալուները պիտի լվացվեն-մաքրվեն տաք ջրով՝ 5—10 բոպե:

գ) յուղաթթափումից հետո առանցքակալի կամ պահանդի մակերեսը պիտի խածատիլ վրձինով—աղային թթվուտով.

դ) առանցքակալի կամ պահանդի անագվող մակերեսը լիակատաք կերպով ոլէտի խածատել.

ե) խածատումը կառարիկուց հետո տեղի յե ունենում առանցքակալուների անջատումը:

6. Նոր առանցքակալուները, վորոնք դեռ լիցք չեն ունեցել, լիցքը կառարելուց առաջ խածատման են յենթարկվում աղաթթվուտով.

7. Անագվումն ամենապատասխանատու ողերացիան և համարվութեան առաջանակում և խնամքով և ուշադիր վերաբերմունք դեպի անագը: Անագման վորակից և կախված առանցքակալի մակերեսին բարեխտ կզշելու տարինանը:

8. Անագել կարելի յե բարակ և կամ հաստ շերտով: Վորպեսը բարեխտի՝ առանցքակալին կպչելն ապահովված լինի, նպատակահարացը և անագել հաստ շերտով:

9. Պահանգը կամ շարժանակը, վորը նախապես մաքրված և այրված (խոճառված) պիտի լինի, տաքացվում և մինչեւ յերեքյակի հալման ջերմաստիճանը—մինչեւ 180° :

Առանցքակալի մակերեսի վրա յեն քսում յերեքյակը և անագիչ ձևակիով տարածում առանցքակալի ամբողջ մակերեսով:

10. Անագման գործողությունները (ոպերացիաները) հետևյալներն են.

ա) նախապես մաքրված և այրված պահանդը և կամ շարժանակը տաքացվում և մինչ յերեքյակի հալման ջերմաստիճանը, այն և 180° :

բ) անագման ժամանակ առանցքակալի վրա յեն քսում յերեքյակը:

գ) անագը—անագիչ ձողիկի միջոցով հավասարաչափ տարածվումը և առանցքակալի ամբողջ մակերեսը:

դ) առանցքակալիների մակերեսի այն տեղերում, ուր անագը վառ է կպչում, անհրաժեշտ և մաքրել քերիչով և խածատել թթվուտով:

Ծանօթություն.—Այս նպատակով կարելի յե նաշաղիր գործողեր, բայց մաքրով նաշաղիր, գորովճետն նաշաղիրի մեջ գտնված խառնուրդները՝ ավազը, փոշին և այլն, պահանդի և առանցքակալի յերեսն աղտոտում են և թույլ չեն տալիս, վոր բարեխտ լավ կպչի նրանց մակերեսին:

ե) վորպեսդի անագը հավասարաչափ ծավալի առանցքակալի ամբողջ մակերեսով—առանցքակալը ձեռքի մեջ շարժում են և հետևում, թէ ինչպես ե բաշխվում-տարածվում անագը, աշխատելով, վոր անագը չթափվի.

զ) հենց վոր անագը տարածվեց ու բռնեց առանցքակալի կամ պահանդի մակերեսը—առանցքակալն անմիջապես պիտի դրվի լիցքի անոթի մեջ:

ԲԱՐԲԻՏԸ ՀԱԼԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Հալոցն այլուքից, խարամից և բաբեխտի մնացորդներից մաքքված պիտի լինի:

2. Բարբիտի հալման ժամանակամիջոցը կարճելու նպատակով հալոցը նախապես տարացնում են:

3. Բաբեխտը հալոցի մեջ են լցնում՝ նախապես այն (բաբեխտը) կտոր-կտոր անելով, յուրաքանչյուր կտորը մոտ 2 կգ: Հալոցի մեջ լցված ամբողջ բաբեխտը պիտի լինի 4—9 կգ: Վոչ մի դեպքում այլ տիպի (տիսակի) բաբեխտ չպիտի խառնել զործագրելիք բաբեխտին:

4. Բաբեխտը հալոցներին հալման սկզբին (մոտավորապես 350⁰ C) բաբեխտի յերեսը ծածկվում ե փայտածխի շերտով, վորի հաստությունը հասնում ե մինչև 30 սիլիմետրի:

5. Զերմաստիճանը 400⁰ հասնելով—հալոցի միջի բաբեխտն ամբողջովին հալչում ե:

6. Բաբեխտն իր մեջ պարունակող հալոցը պիտի տաքացվի մինչև 450⁰ C: Այս ջերմաստիճանը նորմալ ջերմաստիճան ե առանցքակալների՝ բաբեխտ-բռնդրատով լիցք կատարելու համար:

7. 450⁰ ջերմաստիճանը վորոշելու համար ամենից լավ ե գործադրել հրաշափ (պիբոմետր) կամ հատուկ ջերմաչափ:

8. Հրաշափի և կամ հատուկ ջերմաչափի չլինելու դեպքում կարելի յետպովել հետևյալ սիջոցներով.

ա) Ցելսիոսի 450⁰-ի ժամանակ 2—3 սիլիմետր հաստության և մինչև 10 մետր լայնության սոճու չոր մարխը (տաշեղ) հալոցի մեջ սուլիլով՝ մարխը 8—10 վայրկյանում կածխանա (ածուխ կղառնա):

բ) 490—500 C ջերմաստիճանում մարխը բոցավուվում ե 2—3 վայրկյան անմիջապես հետո.

դ) Ցելսիոսի 450 ջերմաստիճանում հալոցի յերեսը ծածկած ածուխը կրոցատի հազիվ նկատելի չափով (ածխի բոցը հազիվ նկատելի կլինի):

Ածխի այրվածքը կարմրաշեկ ե. ածխի այրումը ցույց ե տալիս, վոր անթույլատրելի գեր-տաքացում ե առաջացել:

9. Ցելսի բաբեխտի ջերմաստիճանը 450⁰-ի յե հասնում և բաբեխտը թանձրահեղ ե դառնում ու նրա յերեն սկսում ե փայլել, վորքան հնա-

բավոր և շուա պիտի կատարել առանցքակալների լիցքը, վոչ մի զեպքում թույլ չտալով, վոր բարբիտը չափից ավելի տաքան ս:

10. Ցեթե բարբիտը գեր-տաքացած ե, առանցքակալները լցնելիս սպասքի և նրա մեջ գտնված առանցքակալի հալման արանցներում արտահոսում կտա:

Սանսրօւրյուն.—Սպասքի միջուկի (սրտիկի) գեր-տաքացման դիպքում ել արտահոսում կտաջանաւ:

11. Բարբիտի գեր-տաքանալը շատ վտանգավոր և լիցքի վորակի համար, վորովնետե բացի մատնանշված թերություններից՝ առաջանում և նաև բարբիտի գեր-թթվուտացում:

ԱՐԱՆՑՔԱԿԱԼՆԵՐԻ ԼԻՑՔԻ ՏԵԽՆԻԿԱՆ

1. Լիցքի սպասքի. միջուկը (սրտիկը) պիտի տաքացված լինի 1750—1800 C.

2. Հաջորդ լիցքը կատարելիս սպասքի միջուկը չպետք ե տաքացնել, այլ պետք ե բավարարվել նախորդ լիցքի հետևանքով առաջացած ջերմությամբ:

3. Սպասքի միջուկը զողիչ լամպով յերկրորդ անգամ տաքացնելուց խուսափելու համար անհրաժեշտ ե, վոր լիցքը կատարվի սիստեմատիկաբար, այսինքն՝ անոթից մեկ պահանգը կամ շարժանակը դուրս հանելուց հետո, մյուսը, վոր նախապես պատրաստ պիտի լինի, անմիջապես պիտի գրվի սպասքի մեջ՝ լիցքը կատարելու նպատակով: Այսպիսով յերկու առանցքակալների լիցքը կատարելու միջև ընկած ժամանակամիջոցն ավելի չպիտի լինի՝ քան հարկավոր ե բարբիտը սառչելու ու նրա պնդանալու և լիցքի նպատակով հերթի գրված հետեւալ առանցքակալների անազումը կատարելու համար:

4. Լիցքի վորակը կախված ե լիցքը կատարելու արագությունից՝ սկսելով առանցքակալի անազումից: Վորքան արագ կատարվի լիցքը, այնքան բարբիտն ավելի կկազի (կնստի) առանցքակալի մակերեսին:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ ե անագման և լիցքի ոպերացիաներն անմիջապես իրար յետեւից կատարել այնպես, վոր ընդումիջում չլինի:

5. Առանցքակալների լիցքը կատարելու համար սպասքը բարբիտով լցված հալոցից պիտի հեռու գտնվի մի մետրից վոչ ավելի, վոր պեսզի բարբիտը հալոցից գդալով սպասքի մեջ տեղափոխելիս տաքության քիչ կորուստ առաջանա:

6. Լիցքից առաջ հալոցից մեջ բարբիտը պիտի խառնել յերկաթե գդալով կամ անագման ձողիկով, վորպեսզի լիցքը միատարր բազա դրության լինի:

7. Հալոցի միջից բարբիտը գդալով դուրս հանելիս պետք է հեռացնել ածուխն ու խարամը և հետևել վոր գդալի մեջ ածուխ կամ խարամ չընկնի:

8. Բարբիտն առանցքակալի մեջ լցնելիս հարկավոր ե գդալը մռա պահել սպասքին և լիցքի պրոցեսն արագ կատարել:

Այսպիսով լիցքի վորակը շատ լավ կլինի: Հալոցը բարձրից հոռակիս՝ նրա միջ առաջանում են ողի պղպջակներ, վորոնք, հալոցը առաջելու միջոցին դուրս գալ չկարողանալով, մնում են պնդացած մետաղի մեջ: Բացի այդ թթվուտացումը լինում է չափից ավելի:

9. Հարկավոր ե հատկապես նկատի առնել, վոր հալոցն առանցքակալին լցնելիս անհրաժեշտ ե լիցքը կատարել առանց ընդմիջումի, հակառակ դեպքում առանցքակալին թափված բարքիտը առաջելով՝ նրա վրա լցրած նոր յեռուն բարբիտը հին բարբիտին չի կպչի, և յերկուսի միջև կար կառաջանա: Բացի սրանից, կառաջանա բարձր թթվուտացում, վորը սովորաբար դյուրությամբ ե առաջանում մեծ քանակությամբ հեղտությամբ թթվուտացող կազար պարունակող բարբիտի մեջ (բարբիտի բոնդըատ):

10. Լիցք արած առանցքակալն ապասքի մեջ պիտի մնա այնքան ժամանակ, վոր բավարար լինի պահանդը կամ առանցքակալը սառչելու և բարբիտը պնդանա:

Ծանօթարյուն. — 1. Բարբիտի պնդությունն ստուգում են վորքի ձողի միջոցով:

2. USQ և ԽՏՁ պահանդները սառչում են մոտավորապես 4—5 շապեյի ընթացքում:

3. «ԳԱԶ» առանցքակալները սառչում են 2—3 բողեյի ընթացքում:

11. Այն դեպքերում, յերբ սպասքի գերատաքությունն անցնում է 175°C-ից, անհրաժեշտ ե կամ դադար տառ, վորպեսզի սպասքը սառչի, կամ պեաք և ջրով սառեցներ ձիյտ այդպես նաև այն դեպքում, յերբ սպասքի միջուկի ջերմաստիճանն ընկնում ե, անհրաժեշտ ե դոգիչ լամպով միջուկը տաքացնել:

Սովորաբար առանցքակալի լիցքը կատարողը շուտով հմտություն և ձեռք բերում և լիցքի ոպերացիաները կատարելուց յե առանց ընդմիջումի այնպիս, վոր վոչ լրացուցիչ տաքացման և վոչ ել լրացուցիչ սառեցման պահանջ և առաջանում:

12. Անջատման ոպերացիան լիցքին դուզընթաց և կատարվում:

Այն գեղքում, յերբ վորեն պատճառով առանցքակալների տնապահն ուղանում ե, անհրաժեշտ ե լիցքը կատարելուց առաջ անազումը թարմացնել այնպիս, վոր ապահով լինենք, թե բարբիտի պահանդի մակերեսին անպայման կկպչի:

Անագով թարմացումը կատարվում է ձիշտ այնպես, ինչպես և անառավակը, վորոշ տարբերությամբ, այսպես.

ա) առանցքակալը տաքացնում են մինչև 180° C — մինչև յերեքյակի հալման ջերմաստիճանը.

բ) մաքուր աղբեստի խողանակով պիտք և սրբելումաքրիլ առանցքակալի անջառված մակերեսը.

գ) անմիջապես յերեքյակը քսում են առանցքակալի ամբողջ մակերեսը՝ յերեքյակից պատրաստած ձողի միջոցով.

դ) վորպեսպի յերեքյակը հավասարաչափ քսված լինի առանցքակալի յերեսը, առանցքակալը կամ պահանդը շարժում են ձեռքի մեջ այնպես, վոր առանցքակալի ամբողջ մակերեսն անազի շերտով հավասարաչափ ծածկված լինի:

Արտածորում չպիտի տեղի ունենա.

ե) յերբ անազն արդեն տարածված կլինի առանցքակալի ամբողջ մակերեսով, անմիջապես առանցքակալն անոթի մեջ պիտի դնել և բարբիտն իսկույն պիտի լցնել:

Անագումը նպատակահարմար և կատարել լիցքին զուգընթաց:

13. Յերբ հալցի մեջ յեղած բարբիտի 3/4-ն արդեն գործ և ածված, անհրաժեշտ և բարբիտն ավելացնել վերը մատնանշված նորմին հասցնել այսինքն 4—6 կգ անել:

ԱՌԱՅՔԱԿԱԼՆԵՐԻ ԼԻՑՔԻ ՎՈՐԱԿԻ ՎԵՐՍԱԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ուշադիր վերաբերմունքի և լիցքի վերաբերյալ մեր մատնանշած ցուցումները պահպանելու դեպքում, լիցքը կատարողը շուտով ձեռք և բերում հարկ յեղած հմտությունն առանցքակալների լավորակ լիցք կատարելու համար:

1. Առանցքակալի լիցքը կատարելու վրա վերահսկում և ինչպես լիցքը կատարողը, այնպես և առաջինի հետ նաև արհեստանոցի բըակյորը-խոտանողը (վերահսկիչ կոնտրոլ):

2. Առանցքակալների լիցքի կատարման վերահսկողությունը տեղի յե ունենում հետևյալ յեղանակով.

ա) լիցք արած առանցքակալի մակերեսն ստուգում-զննում են: Առանցքակալի մակերեսը հարթ-հավասար և անփայլ արծաթազույն պիտի լինի.

բ) լիցքի բնկվածքը մանր բյուրեղային պիտի լինի, բնկվածքում խոշոր բյուրեղներ չպիտի գտնվին:

գ) հատուկ բռնիչի միջոցով պահված կամ մեջտեղից կախ տված առանցքակալն ստուգելիս (փորձելիս) առանցքակալին զարկած ժուրճի հարվածից պիտի առաջանա մետաղի անդողոջ հնչյուն:

Դրդողութեան ու խուլ ձայնը նշան էն, վոր բարբիտի շերտն աժուր չի կպած պահանդին կամ առանցքակալին, և այդպիսի առանցքակալները ճանաչվում են վորպիս խոտանած առանցքակալներ.

Դ) առանցքակալի մակերեսի վրա չպիտի լինեն նստվածքի կամ գաղային խեցիներ (ռակօսուհա), վոր հնտագա մեխանիկական մշակման ժամանակ հեռանալ հնարավոր չեւ.

Ե) հատկապիս մեծ խնամքով պիտի ստուգել առանցքակալի կողերի լիցքը. ճեղքվածքներ-խեցիներ, չլցված տեղեր և կարեր առանցքակալի մակերեսին չպիտի լինեն:

ԱՌԱՆՑՔԱԿԱԼԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԼԻՑԲԻՑ ՀԵՏԾ

1. Լիցքը կատարելուց հետո առանցքակալի վրայից պիտի մաքը և նրա՝ հալոցքից մնացած ցցուկները:

2. Ցցուկները պիտք ե զոչնչացնել՝ տաքացած զոդիչով կարելով, ճամ, ծայրահեղ դեպքում, խոշոր ատամ ունեցող մնտաղի աղոցով:

Մանարույրուն — 1. Ցցուկները պահանդիների վրայից մետաղի աղոցով կտրելու դեպքում անհրաժեշտ ե ունենալ հատուկ հարմարանք՝ պահանդիները մամլակի մնջ ամրացնելու համար, հակառակ դեպքում պահանդիները կարող են մնալ պիտի:

2. Վոչ մի դեպքում չի թույլատրվում պահանդիները մամլակի մեջ դնել անմիջապես, վորպինեակ դրանից պահանդիները կարող են ձեւափոխվել (դեֆորմացիա), բարբիտի կաչունությունը կխախտվի, և կարող են առաջանալ սովորական աչքով աննկատելի, բայց խոշորացուցով նկատելի մանը ճեղքեր:

3. Վերը մատնանշված յեղանակով վորեւ մեկով ցցուկները հեռացնելուց հետո անհրաժեշտ է կածանները կամ հատվածի մակերեսը մաքրել տավրիչով և կամ խարատել խարտոցով:

Ճիշտ նույն յեղանակով ել խարտոցով հարկավոր ե քերել-մաքրել կողերն ու ցցուկները:

4. Ծորանքները հեռացնելուց հետո պիտի կատարել շարժանակների և պահանդիների յերկրորդ ստուգումը — ձայնի նկատմամբ:

5. Լիցքը կատարված և շարժանակի վրա արդեն ստուգված պահանդիները ջակվում են, վորից հետո ստուգումը — ձայնի նկատմամբ:

6. Պահանդիները չպիտի խորասուղվեն շարժանակի մեջ, նբանք պիտի շարժանակի մակերեսից 0,5—0,15 միլիմետր բարձր մնան և ամուլցպիչն շարժանակի դանդվածին:

7. Շարժանակի պահանդները պիտի ամուռ հաղցված լինեն շաբախակի ներքին գլխի և նրա կափարչի մեջ և իրենց ամբողջ արտաքին մակերեսներով պիտի հպվեն շարժանակին և նրա կափարչին:

Ծանօթարյութ.—Նկատի առնելով այն, վոր առանցքակալների լիցքը բոնդրատ-բարբիտով դյուլրազգաց և զարկերի նկատմամբ, և հսարավոր ե, վոր զարկերից ճեղքերտու ջանան—պահանդի մշակումը պիտի կատարել մեծ զգուշությամբ:

8. Այն շարժանակները, վորոնք պահանդներ չունեն, նրանց հեղոյուաների անցքերի մեջ լիցքի ժամանակ լցված բարբիտը մտքրում են հատուկ գայլիկոնով:

9. Բոնդրատ-բարբիտով լիցք արած պահանդներն ու շարժանակները պիտի գրոշմվեն Բ-ՄԿ մարկայով, իսկ Բ-83 բարբիտով լիցք արտաները—Ե-83 մարկայով են գրոշմվելու:

10. Յուղատար անցքերը պետք ե ծակել միմիայն սուր գայլիկոնով, վորպեսզի բարբիտների հպվածքը պահանդին—անմնաս մնա:

11. Առանցքակալները խորը, տաշեղի հաստ շերտով, չպիտի խառըտել վորոշչետե այդ գեպքում բարբիտի շերտը կարող ե պոկվել։ Տաշեղի հաստությունը պիտի լինի 1—1,25 միլիմետր՝ առաջին—սկզբանական խարատման համար, իսկ յերկրորդ—բոլորովին մաքրելու նպատակով խարատելու համար—0,25 մմ։

12. Յուղատար խուղակներ փորելն ընդունելի չպիտի համարել վորովինետե այս գեպքում ել բարբիտի շերտը կարող ե պոկվել, մասնավանդ այն գեպքում, յերբ գործիքը բութ ե:

Ամենից լավ ե յուղատար փոսիկները ֆրեղել (գերծել) հատուկ հարժարանքով կամ դաղղահի միջոցով։

ԲԱԲԲԻՏԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Բարբիտի թափթփուկներն են (օռխօծա):

1. Ծորանքները:

ա) խարավածքը—տաշեղները.

բ) հին առանցքակալներից հալած բարբիտը.

գ) բարբիտի հոսը (ծորանքները), կտորներն ու ցայտերը։

2. Հիմնական առանցքակալների լիցք կատարելու համար հալոցին կարելի յե ավելացնել հալոցի ամբողջ տարողության 30% -ի չափով բարբիտի թափթփուկներ, այսպես, հոս (ծորանք) 20% , տաշեղ՝ 10% ։

Շարժանակային առանցքակալների լիցք կատարելու հալոցին կարելի յե ավելացնել միայն ծորանքներ՝ հալոցի մեջ լցված բարբիտ՝ 10% -ի չափով միայն։

4. Բարբիտին խառնած խարատվածքը պիտի ուշադրությամբ հետազոտել և հետևել վոր խարատվածքն իր մեջ չունենա կողմնակի խառնուրդ—մանր մետաղի փոշի, ինչպես նաև մետաղի կամ չուգունի խարատվածք:

Հին առանցքակալներից հալած բարբիտից պիտի ձուլել 4—5 կիլոգրամանոց կտորներ:

6. Հին, կաղապարված բարբիտը պիտի դրոշմել բոնդրատ-բարբիտի ՄԿ-3 մարկայով, Ե-83 բարբիտը՝ „0-3“ մարկայով: (0—նշանակում և անագե բարբիտ):

7. Առանցքակալներից հալած և „0-3“ կամ „ՄԿ-3“ մարկաներով դրոշմանշած հին բարբիտը պահեստ պիտք ե հանձնել:

8. ՄԿ-3 բարբիտի թափիթփուկները (օտխօնել), վորոնք պիտանի չեն վերանորոգիչ արհեստանոցներում ոգտագործելու համար, հետզհետեւ հավաքվելով պիտի հանձնվեն բարբիտի գործարաններին—վերահալման համար:

ԲԱԲԲԻՏԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ ՈՒ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

1. Բարբիտը սուր—դեֆիցիտային ապրանք և—նրա պահպանությունն ինչպես պահեստում, այնպես և արհեստանոցում պիտի լինի խէստ վերահսկողության տակ այնպիս, վոր բարբիտն անխնայորեն չծախսվի, չգողացվի և այլն:

Պահեստում բարբիտը պիտք ե պահվի հատուկ արկղիկում, պահարանի մեջ, վորը փակի տակ պիտի լինի շարունակ:

3. Բարբիտը բաց և թողնվում միմիայն վերանորոգիչ արհեստանոցի վարիչի թույլտվությամբ, բացառապես վերանորոգման յինթակա արակտորների առանցքակալների լիցքը կատարելու համար:

4. Բարբիտը կշռում են և բաց են թողնում միմիայն քաշով. հաշվի մեջ գրում են այն բանվորի անունը, վորը, պատվերի համարի համաձայն, պիտի կատարի լիցքը:

5. Յուրաքանչյուր հերթափոխության կամ բանվորական որվագիրը կազմվում և բարբիտի գործածության որական համամետական հաշիվ—տեղեկանք. հաշվի մեջ ցույց պիտի տրվի՝

ա) հերթափոխության սկզբին առկա (յեղած, մնացած) բարբիտը՝ բարբիտի ձողեր, կամ կտորներ, վորոնց քաշը պիտք ե նշանակել առանցքակալներից, վերահարման միջոցով, ստացված հին բարբիտի հոսքաժքներ, խարստվածք.

բ) պիտի նշանակել պահեստից ստացված թարմ բարբիտի քաշը. նշանակել նաև որվա ընթացքում հին առանցքակալներից վերահարման միջոցով ստացված բարբիտի, ծորանքների ու խարատվածքի քաշը.

գ) պիտի ցույց տալ առանցքակալների ու խարատվածքի քանակը (թե ինչ քանակությամբ լիցք ու խարատվածք ե կատարված), նշելով առանցքակալների տիպը (տեսակը).

դ) պիտի նշանակել հերթափոխության ընթացքում ծախսված բար-բիտի քանակությունը՝ հետևյալ կարգով. զարժանակների ու պահանդ-ների լիցքի վրա ծախսված թարմ բարբիտի քանակությունը, հաշվի առնելով նաև այրվածքը, ապա նաև բանեցրած թափվածքներն ըստ տեսակների.

ե) պետք ե հաշվել մնացորդ բարբիտը և համեմատել ծախսածի հետ՝ կազմելով որական հաշվեկշիռը:

6. Այս ձևի հաշվը դպրությամբ պահպանելու և կատարելու համար լիցքի ցեխում հետևյալ կարգը պիտի սահմանել.

ա) թարմ բարբիտը պիտի պահել առանձին արկղի մեջ.

բ) հոսվածքներն առանձին արկղում

գ) առանցքակալները մշակելու ժամանակ և դրա հետևանքով ստացված խարատվածքը նույնպես պիտի պահպի առանձին արկղներում:

7. Բոնդրատ-բարբիտն ու նրա թափթփուկները Ե-83 բարբիտից և սրա թափվածքից առանձին պիտի պահել

8. Վոչ մի դեպքում չպետք է իրար խառնել Ե-83 և բոնդրատ-բարբիտը:

9. Բարբիտի տարբեր տեսակների հաշվը ավելի լավ պահելու համար անհրաժեշտ է բարբիտ և հոսվածքներ պարունակող արկղները դրոշմանշել այսպիս.

ա) մաքուր բարբիտ Ե-83, Ե-ՄԿ

բ) հոսվածքներ 0-2, M-2

գ) հին բարբիտ 0-3, M-3

դ) խարատվածք 0-C, M-C (Ը-նշանակում և տաշնոք):

10. Վորպեսզի Ե-83 և Ե-ՄԿ բարբիտներն աշխատանքի ընթացքում իրար չխառնվեն, նրանց հալումն ու լիցքը պիտի կատարել տարբեր հերթափոխությունների ժամանակ. (յեթե աշխատանքը յերկու հերթով և կատարվում), կամ առանձին որերին, յեթե աշխատանքը մի հերթափոխությամբ և կատարվում:

ԼԻՑՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

1. Հալման ու զոդիչ լամպերը պետք ե կանոնավորել, ուղղել և մի-միայն յերկաթե թիթեղով պատաժ դաղդյանի վրա, թույլ չտալով, վո՞կերոսինը թափվի փայտե մասերին:

2. Զոդիչ լամպերը չափից ավելի չպիտի լարել, չպետք և թույլ տալ նաև, զոր լամպերը շատ տաքանան:

3. Հալոցի մեջ բարբիտը պիտի դնել աքցանի միջոցով դգուշաբեն, այնպես, վոր ցայտուկ չառաջանա:

4. Առանցքակալի լիցքը կատարելիս պիտի գործ լինել, վոր բարբիտի ցայտուկներ չընկնեն աշխատողների յերեսին կամ ձեռքերին, վոր կարող ե տեղի ունենալ հատկապես այն դեպքում, յերբ բարբիտը գերտաքացած ե:

5. Տաք առանցքակալները պետք ե բռնել միմիայն բռնիչի միջոցով, հակառակ դեպքում կարող են մարմնի այրվածքներ առաջանալ:

6. Մաքուր աղաթթվուտի հետ պետք ե զգուշությամբ վարկել և չթուղնել, վոր թափիլի:

7. Կառւստիկ սոդան, վորը գործադրվում ե կեղտուտված առանցքակալները նախապես մաքրելու նպատակով լուծույթ ստանալու համար, պետք ե պահել առանձին, զգուշորեն վարկել նրա հետ՝ այրվածքներից խուսափելու համար:

8. Բարբիտը կոտրատելիս պետք ե նախազգուշական միջոցներ ձեռք առնել, վոր բարբիտի մասնիկները չընկնեն աշխատողի մարմնի չպաշտպանված մասերի վրա:

9. Ձեռքով ստուգումներ կատարելիս հարկավոր ե խուսափել ջարդված կառուների սրածայր մասերից, վորպեսզի ձեռքը մնասվածք չստանա:

10. Առանցքակալներն անագելիս անհրաժեշտ ե խողանակը գեղի առաջ շարժել և վոչ դեպի իրեն, վորպեսզի աշխատողի յերեսին անագի ցայտուկ չթռչի:

11. Կազմարեն հալվածքները թունավոր են, այդ պատճառով և աշխատանքը վերջացնելուց հետո, ուտելուց առաջ ձեռքերը հարկավոր ե մաքուր լվանալ:

12. Լիցք կատարելու տեղում ողը պիտի լինի առատ, մաքուր, թարմ, այդ պատճառով անհրաժեշտ ե լավ ողափոխություն սահմանել:

13. Ցեթե հալոցի և կամ զոդիչ լամպերը հիսուս են (մուր են տալիս), պետք ե դրա առաջն առնել և աղա շարունակել աշխատանքը:

14. Ձեռքերն այրվածքից ու ցայտուկից ազատ պահելու համար պիտի թաթպանները ունենալ:

Ծանօթուրյան.—Գործնականում հարկավոր ե միայն ձախ ձեռքին թաթպան ունենալ:

ԱՌԱՑՔԱԿԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԾԱԽՍՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐ

Առանձին ուշադրության են արժանի բարբիտի նորմաները: Բարբիտի այսաեղ աղյուսակ № 7-ը, ինչպես Ե-83 բարբիտի, այնպես և Ե-ՄԿ բռնդրատբարբիտի նորմաները:

ԱՏՁ յեկ ԽՏՁ տրակտորներում մի զույգ պահանջների համար գործադրվող Բ-83 բարբիտի ֆանակը՝ գրամմերով

Աղյուսակ № 7

Առթ	Բ-83 բարբիտի ծախուց	Քաշը
1.	Հին առանցքակալների հալոցք	320 գրամ
2.	Զարդելու հետևանքով առաջացած պակասորդ . . .	80 »
3.	Լիցքի համար գործադրվել կարող ե	240 »
4.	Առանցքակալի մեջ և լցվում (հալվածքների և այլ բաների հետ միասին,	856 »
5.	Կորուստ հալման ժամանակ	59 »
6.	Հալվածքների քաշը և պահանջների ու առանցքակալների խարատումից, յուղատար անցքերը գայլիկոննելուց, յուղատար խուղակները ֆրեզելուց (գերծելուց) առաջացած տաշեղների քաշը . . .	416 »
7.	Կորուստ թափվածքը հալելուց	34 »
8.	Առանցքակալների միջի բարբիտի մաքուր քաշը .	440 »
9.	Քերիչով տաշվածքի համար թողած բարբիտ . . .	120 »
10.	Բարբիտի ընդհանուր ծախս	653 »
11.	Վերանորոգման նպատակով պահանջվող (նոր) բարբիտի քանակը	
Ընդամենը մեկ կոմպլիկտի համար . . .		1652 »

ԱՏՁ յեկ ԽՏՁ տրակտորներում մի զույգ պահանջների համար գործադրվող Բ-ՄԿ բարբիտի ֆանակը գրամմերով

Աղյուսակ № 8

Առթ	Բ-ՄԿ բարբիտի ծախուց	Քաշը
1.	Առանցքակալների մեջ են լցնում	1.040 գ
2.	Կորուստ շիփտայի խարամի և ցայտուկի հալման ժամանակ	50 »
3.	Թափվածքների քաշը և պահանջների ու առանցքակալների խարատումից, յուղատար անցքերը գայլիկոննելուց, յուղատար փոսուկները ֆրեզելուց առաջացած տաշեղների քաշը	500 »
4.	Կորուստ խարատվածքի զաման ժամանակը բարբիտի քանակություն	50 »
5.	Մաքուր բարբիտի քանակությունն առանցքակալների մեջ	490 »
6.	Բարբիտի ընդհանուր ծախս	590 »
Ընդամենը մի տրակտորի համար		2360 »

Առանցքակալների վերանորոգման համար գործադրված այլ
նյուրերի ծախսը

Աղյուսակ № 9

Թ.№	Նյութերի անուններն ու դորձադրվող առարկաները	ԱՏՁ յեկ ԽՏՁ արտկան. Փե կունալ. առանց ֆակտան. համ.
1.	Ցերեքյակ, անազման համար	50 գրամ
2.	Ցինկ. աղաթթվալուս՝ խածատելու համար	3 »
3.	Աղաթթվալուս՝ անազման համար	15 »
4.	Փայտածուխ՝ հալոցքի ժամանակ կոմպոնենտներն այրքելուց պահպանելու համար	5 »
5.	Կերոսին	
6.	Ավտոլ՝ առանցքակալները խարելու համար	

ԱՏՁ յեկ ԽՏՁ տրակտորների առանցքակալների վերանորոգման
ժամանակի նորմաները

Աղյուսակ № 10

Թ.№	Պահանջվող նորմումը	Ժամանակի նորմա
1.	ԱՏՁ և ԽՏՁ տրակտորների մի կոմպլեկտ պահանդ- ները հին բարեխտը հալելուց հետո նորով լցնելը	1 ժ. 10 ր.
2.	ԱՏՁ և ԽՏՁ տրակտորների նոր առանցքակալների լեցը	1 » 5 »
3.	ԱՏՁ և ԽՏՁ տրակտորների լիսեռի պահանդների մի կոմպլեկտ խարսանելը	1 » 30 »
4.	ԱՏՁ և ԽՏՁ տրակտորների առանցքակալների խա- րումը պատրաստելու համար սառցարանները սարքելու, յուղատար խուղակները Փրեզելու, յու- ղատար անցքերը դայլիկոներու և կոմպլեկտավո- րումը միջադիրներով կարգավորելու համար	1 » 20 »
5.	ԱՏՁ և ԽՏՁ տրակտորների շարժիչի առանցքակալ- ները խարման դազգյանին տեղադրելն ու խարումը կատարելը	1 » 30 »

ԲԱՐԲԻՏԻ ԱՐԱՑՔԱՎԱԼՆԵՐԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ
ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմքը կԱՏԱՐՈՂԸ կատարում ե առանցքակալների հին բարեխտ-
հարցքը. պատրաստում ե տարբեր սիստեմների (տեսակների) առանց-
քակալների լիցը կատարելու սպասքները, շարժանակներն ու պահանդ-
ները տեղափորում ե սպասքի մեջ. Սարքավորում-տեղադրում ե «Փազ»

ավտոմոբիլի հիմնական առանցքակալները լցնելու սպասքը բլոկի՝ իրանիք վրա, կատարում ե հին բարբիտի և խարատվածքի վերահալոցքը, շինուագը պատրաստում ե բարբիտը հալելու նպատակով: Կատարում է առանցքակալների լիցքը և լիցքից հետո հավաքում ե լիցքի սպասքը:

Լիցքի կատարողը պիտի իմանա շարժիչների և վերանորոգման մերքենաների կոնստրուկցիան (կառուցվածքը) և բարբիտի առանցքակալների աշխատանքի պայմանները: Լիցքը կատարողը պիտի գիտենա ինչպես Ե-83 և Բ-ՄԿ (բոնդրատ) բարբիտների բաղադրությունը, այնպես և ուրիշ, վերանորոգման յենթակա մեքենաների համար գործադրվող բարբիտների բաղադրությունը:

Լիցքը կատարողը պիտի իմանա բարբիտների մեխանիկական և տեխնոլոգիական հատկությունները—պիտի գիտենա բարբիտի համան և հարցքը լցնելու ջերմաստիճանները: Նա պետք է իմանա նաև առանցքակալների լիցքը կատարելու համար գործադրվող սպասքների կառուցվածքն ու այդ սպասքներով աշխատելու պայմանները, տեղյակ պիտի լինի բարբիտի հարցքը ի ժամանակ սպասարկող զողիչ լամպերին ու արանց գործադրությանը:

Լիցքը կատարողը պիտի համար նաև բարբիտի սառեցման արագության ազդեցությունը լիցքի վորակի վրա, նա պիտի կարողանա կարգավորել բարբիտի տաքացման ջերմաստիճանը և ոգտվել ջերմաստիճանը վորոշող սպասքներից, պիտի կարողանա վորոշել բարբիտի տեսակը, վորակն ու պիտանիությունը և սահմանել սպասքների կարգագործմը: Վերջապես նա պիտի վորոշել կարողանա լիցքի վորակը:

Վարակավարման կարգը՝ 5:

ԽԱՐԱՍՈՂԵՑ ստուգում ե լիցք արած առանցքակալները և ընդունում ե, հալվածքները հատում ե, թափվածքները հալում, կտրիչներն սպասքի մեջ և գնում, առանցքակալները խարատման համար տեղադրությանը ստուգատում ե յուղատար խուզակները պատրաստում:

Խարատողը պիտի իմանա վերանորոգվող մեքենաների շարժիչների կոնստրուկցիան և շարժիչների առանցքակալների աշխատանքի պայմանները:

Խարատողը պիտի գիտենա Ե-83 և Բ-ՄԿ (բոնդրատ) բարբիտների տարբերությունը և սրանց մեխանիկական հատկությունները: Նա պիտի տեղյակ լինի միկրոմետրին և նրա գործադրությանը, ճանաչի առանցքակալները խարատելու սպասքները և սրանց գործածության ու նրանց հետ վարդելու յիղանակները:

Խարատողը պիտի կարողանա ճիշտ չափել լիսեռի վղիկները, պիտի կարողանա կարգավորել խարատման սպասքներն ըստ լիսեռների՝ հա-

մաձայն միկրոմետրի ցուցումների — ճիշտ տեղադրել կտրիչները և խարատվածքի վորակն ստուգել:

Վարակավորման կարգը՝ 5:

ԽԱՐՈՒԿԱԾ ԿԱՏԱՐԱԴԱԾ տեղադրում և շարժիչը դադյահի վրա և կատարում և առանցքակալների խարումը, առանցքակալների մշակումը, լվանում և շարժիչը խարումը կատարելուց հետո և դադյահից հանում և շարժիչը:

Նա պիտի գիտենա վերանորոգման յենթակա մեքենաների կոնստրուկցիան և ծնկածե լիսեռի ու առանցքակալների աշխատանքի պայմանները, բարիքտի միխանիկական և տեխնոլոգիական հատկություններն առանցքակալներում:

Խարումը կատարողը պիտի իմանա խարման դադյահի կառուցվածքն ու նրա գործածության յեղանակները, ինչպես և դադյահի խնամքի պայմանները:

Նա պիտի իմանա խարումը կատարելու կանոններն ու կատարելիք չործողությունների կարգը (հաջորդականությունը):

Պիտի կարողանա շարժիչը դադյահին տեղադրել գործի գցել դադյահը, կարգավորել առանցքակալների ձգողությունը, խարումը կատարելու ժամանակ ատահովել խարման յենթակա առանցքակալների սառեցումը և իմանա շարժիչի լիսեռի աշխատանքի բոլոր պայմանները:

Վարակավորման կարգը՝ 3:

ԲԱԲԲԻՏՈՎ ԼՅՎԱԾ ԱՌԱՆՑԱԿԱԼՆԵՐԻ ՅԵԿ ԾՆԿԱԶԵՎ ԼԻՍԵՌՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

Նորմալ կերպով աշխատող շարժիչի բարեխտով լցված առանցքակալի և ծնկածե լիսեռի արագ մաշվելու հիմնական պատճառներն են,


1. Առանցքակալները ժամանակին չձգելը:

2. Առանցքակալներու անկանոն ձգելը:

3. Շարժիչը կանոնավոր կերպով չյուղելը:

4. Յուղի վատ վորակը:

Այս խնդիրներն ավելի պարզելու համար յերկու առանձին տրակտորների միջազգով փորձեր են կատարված: Այդ տրակտորներն աշխատում են միևնույն շրջանում, բայց դաշտային տարբեր բրիդակներում և տարբեր աստիճանի մասնագետ սեխանիկների հակողության տակ: Դիտերվ գիտաբանը (նկ. 14) մենք տեսնում ենք, վոր տրակտորներից մեկն աշխատել է 540 ժամ, նրա ծնկածե լիսեռի վզիկներին (վորոնքի աշխատել են շարժանակի ներքին գլխի հետ) ելիսու և գոյացել և



Նկ. 14. Ցերտու տրակտորների ծնկաձև լիսեռների ելքապով, առանցքքակալների ձգման ժամանակամիջոցի և հանգած միջնադիրների հաստության չափի դիագրամը:


այդ ելիպսի մեծությունն է 0,115 մմ։ Մյուս տրակտորի (վորն աշխատել ե 359 ժամ) ծնկաձև լիսեռի վզիկների վրա գոյացած ելիպսի մեծությունը հավասար է 0,26 մմ, և վզիկը խարատելու, հղկելու պահանջ ե առաջացել, չնայած վոր յերկու տրակտորների առանցքակարներն ել մոտավորապես միաժամանակ են ձգվել ու կարգավորվել Նկար 14-ի վրա պատկերված դիագրամը պարզ կերպով ցույց է տալիս, թե ինչպես են աճել յերկու տրակտորների ծնկաձև լիսեռների ելիպսները լիսեռների վզիկների վրա. դիագրամը ցույց է տալիս նաև առանցքակալները ձգելու ժամանակամիջոցը և հանված միջնադիրների միջին հաստությունը։ Այս (նկ. 14) դիագրամը կաղմված է № 10 աղյուսակում բերած թվերի հիման վրա։

Բարբիտովի լցված առանցքակալների ավելի արագ մաշվելու և ծընկաձև լիսեռների վզիկների վրա ելիպս գոյանալու պատճառներն ստուգելիս պարզվում են կատարած փորձի շատ հետաքրքիր արդյունքները, վոր մենք տեսնում ենք հետեւյալ նկ. 15-ի վրա. դիագրամը կառուցված է № 11 աղյուսակում բերած թվերի հիման վրա։

Մուկվայի մարզում աշխատող Աբրիկադի 1934 թ. արտադրած տրակտորների ծնկաձև լիսեռների վզիկների մաշվածը՝ տրակտորները 1500 բանվորական ժամ աշխատելուց հետո—ըստ ԱՀ հարթության—հավասար են յեղել 0,77—0,84 մմ, ըստ Ե-Ե հարթության՝ 0,57—0,68 մմ, այն ժամանակ, յերբ ելիպսը հավասար է յեղել 0,17—0,20 մմ։

Երիգաղի տրակտորների մի քանի լիսեռներն ել—տրակտորը 1000 ժամ աշխատելուց հետո,—ցույց են տվել մաքսիմում մաշվածը՝ 0,57 մմ այն ժամանակ, յերբ ելիպսի մեծությունը հավասար է յեղել 0,205 մմ։ Համեմատության համար ոգտվենք 1933 թվին արտադրված տրակտորների միջոցով կատարված փորձերի տվյալներով։ Վերցնենք յերկու լիսեռ, փորսնք բնորոշ են իրենց մաշվելու և խարատվելու—հղկվելու տեսակետից։ Փորձարկված տրակտորներից մեկի լիսեռը 1933 թվին յերկու անգամ է խարատվել ու հղկվել—առաջին անգամին՝ 620 բանվորական ժամ աշխատելուց հետո, յերկրորդ անգամին՝ 542 բանվորական ժամ աշխատելուց հետո։ Նույն տրակտորի լիսեռը 1934 թվին կան ժամ աշխատելուց հետո, յերկրորդ անգամին՝ 620 բանվորական ժամ աշխատելուց հետո, յերեսորդ անգամին՝ 542 բանվորական ժամ աշխատելուց հետո, յերեսորդ անգամին՝ 357 ժամ աշխատելուց հետո, ամեն անգամին ելիպսի մեծությունը հայտառ է յեղել 0,205—0,225 մմ։ Մյուս լիսեռը 1933 թ. խարատվել-հղկվել է՝ տրակտորը 817 ժամ աշխատելուց հետո։ Յերկրորդ անգամ խարատվել-հղկվել է՝ 624 ժամ աշխատելուց հետո։

Յերկրորդ անգամ խարատվելուց հետո այդ լիսեռն աշխատում է 1034 բանվորական ժամ, վորից հետո խարատվում-հղկվում է, յերբ վզիկի ելիպսի մեծությունը հասնում է 0,20 մմ։



Նկ. 15. Ծնկածի լիսհոների վզիկների մաշվելը և նրանց վրա ելիպս գոյանու դիտվութը:

Առաջացած մաշվածքների և ելիպսների մեծությունը բացատրվում է առանցքակալների ձգման վորակի և մեխանիկի կողմից ցույց տըրված տեխնիկական սպասարկման վորակի տարբերության հետևանքով։ Եյն տրակտորը, վորի լիսեռը 1934 թվին յերկու անգամ է խարսափել—սպասարկվել է ավելի ցածրորակ մեխանիկի կողմից և վորոշ ժամանակ աշխատել է ավտոլ 10 յուզով, վորը ստանդարտով չի նախատեսված տրակտորների աշխատանքի համար։ Փորձարկված տրակտորները 1933 թ. աշխատել են վարոնեմի մարզում, իսկ 1934 թ. Մուշկայի մարզում։ Վերոհիշյալ տրակտորներով կատարված փորձերի արդյունքները ցույց են տալիս, վոր 1934 թվին լիսեռի վզիկները խարսափել են միջին հաշվով ամեն 600 ժամ աշխատելուց հետո։ Լիսեռների այլին յերկար աշխատելը (1934 թվին) բացարձում է գործածվող յուղի բարձր վորակով, տրակտորների ավելի նորմալ բեռնվածությամբ, տրակտորիստների համեմատաբար ավելի բարձր պատրաստականությամբ, նրանց ավելի ուշադիր վերաբերմունքով գեալի մեքենաները և վերջապես գեալի տրակտորները ցույցաբերած ավելի վորակավորված մեխանիկների տեխնիկական սպասարկումով, վորոնք (մեխանիկները) հառա կերպով յուրացընել են առանցքակալները ձգելու և հատկապես բարբիտը ուսցիուալ կերպով ոդտագործելու յիշանակը։

Հետեւելով 1934 թվին 1500 բանվորական ժամ աշխատած տրակտորի ծնկած լիսեռի վզիկների մաշվածքը և ելիպսը պատկերող կոռուպծին (նկ. 15), մենք տեսնում ենք՝ գիտաբամի վրա կորագիծ ցույց և տալիս, վոր լիսեռը 1000 ժամ աշխատելուց հետո, մինչև 1500 ժամ աշխատանքը լրացնելու ընթացքում, նրա վզիկների ելիպսի աճումը շատ գանդաղ է գնում, այսինքն՝ վզիկները մաշվում են մոտավորապես ըստ շրջապես—միահավասար։

ԲԱԲԲԻՏԻ ՀԱՍՏ ՇԵՐՏՈՎ ԼԻՑՔ ԱՐԱԾ ՊԱՀԱՆԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Վորպեսզի վորոշվի, թե պահանդի լիցքը բարբիտի ինչ հաստության շերտով պիտի կատարել և թե լիսեռի վզիկի տրամադիծն ինչ չափով կոռուպտ պիտի կատարված և հետեւյալ փորձը, լիսեռի թույլատրելի յե փոքրացնել, կատարված և հետեւյալ փորձը, լիսեռի վզիկը խարսափել են մինչև 65 մմ այն ժամանակ, յերբ նորմալ վզիկի վզիկը խարսափել են մինչև 73 մմ և նարատելուց հետո լիսեռն աշխատում է 330 տրամադիծը 73 մմ և նարատելուց հետո լիսեռն աշխատում է 330 տրամադիծը 0,36 մմ, ելիպսը —0,15 մմ։ Լիսեռի աշխատանքը կայուն է, մաշվածքները շատ քիչ են տարբերվում նորմալ տրամադիծով աշխատող վզիկի մաշվածքներից։

Ավելի փոքրացած տրամագծով լիսեռների աշխատանքի պայմանների հնարավորությունները փորձերի միջոցով չեն ստուգված, բայց պետք ե հաշվի առնել այն հանգամանքը, վոր ավելի բարակ լիսեռներն ավելի զգալի ծոռւմ են տալիս, վորի հետևանքն ել լինում ե այն, վոր բարբարի առանցքակալները շատ արագ մաշվում են:

Այդ պատճառով ել կարիք ե առաջանում հաճախակի ձգել առանցքակալները: Վերջին նկատառումներից յենելով՝ չի թույլատրվում լիսեռների զգիկների տրամագիծը 65 մետր ավելի փոքրացնել:

Վզիկը 65 մմ տրամագիծ ունենալու դեպքում առանցքակալների նորմալ պահանջներում բարբարի լիցքի շերտը շատ հաստ ե լինում: Բարբարի հաստ շերտով աշխատող պահանջները շատ շուտ մաշվում են, դրա համար ել 65 մմ տրամագիծ ունեցող զգիկների համար սովորական պահանջները պետք ե փոխարինել վերանորոգման հատուկ չափերի պահանջներով:

Փորձերի արդյունքները հնարավորություն են տալիս յեղբակացնելու հետևյալը.

1. Ե-ՄՀ բարբարի լիցք արած պահանջներով առանցքակալները պետք ե ձգել ամեն 100—120 բանվորական ժամ աշխատանքից հետո, իսկ Ե-83 բարբարատիպ աշխատող առանցքակալները—պետք ե ձգել ամեն 120—130 բանվորական ժամ աշխատանքից հետո:

2. Լիսեռների զգիկների վրա 0,20 մմ ելիպս զոյտանալու դեպքում առաջանում ե զգալի թխկոց և պահանջվում ե առանցքակալների հաճախակի ձգում, վորի հետևանքով զգիկների խարտում-հղկումն անհրաժեշտություն ե դառնում:

Լիսեռների զգիկները խարատելիս հղկելիս (յեթե այդ աշխատանքը հատուկ դագդյանի վրա յե կատարվում) խարատվող մետաղի հաստությունն ըստ ելիպսի փոքր տրամագիծի—պետք ե լինի մոտավորապես 0,30 մմ: Վերոհիշյալ պայմաններում, 1934 թվին, տրակտորը 1200 բանվորական ժամ աշխատելուց հետո, նրա լիսեռի զգիկի մաշվածը մեծությունը հազարար ե 0,76 մմ, ելիպսը հասնում եր 0,20 մմ:

Այս մեծությանն ավելացնելով ամեն անգայ խարատելու-հղկելու հետևանքով հանվող մետաղի շերտի հաստությունը—լիսեռի զգիկի տրամագիծի փոքրացումը—զգիկը յուրաքանչյուր անգամին խարատելուց հետո հավասարվում ե 1,1 մմ:

1933 թ. արտադրված տրակտորի վերոհիշյալ աշխատանքների պայմաններում, տրակտորի 600 բանվորական ժամվա աշխատանքից հետո, լիսեռի զգիկի մաշվածը հասնում ե 0,60 մմ, իսկ ելիպսի մեծությունը՝ 0,21 մմ. սրանց վրա ավելացնելով հանվող մետաղի շերտի հաստության մեծությունը, ամեն անգամ զգիկը խարատելուց հետո, նրա (զգիկի) տրամագիծը փոքրանում ե 0,9 մմ:

Ցելնելով այս տվյալներից՝ յեզրակացնում ենք, վար տրակտորը շուրագանչում՝ 800—1000 բանվորական ժամ աշխատելուց հետո՝ զղիկ ները պիտի խարատվին:

3. Ծնկաձև լիսեռի վղիկի տրամադիծը 65 մմ-ից ավելի պակաս չինելու դեպքում լիսեռն աշխատեցնելը տեսնիկական տեսակետից անթույլատրեկի յե համարվում: 65—68 մմ տրամադիծ ունեցող վղիկների համար անպայման պետք է գործադրել հատուկ վերանորոգման չափսեր ունեցող, հաստացրած պատերով պահանջներ:

4. Այս պայմաններից յելնելով, ոգտվեռվ 1933, 1934 և 1935 թվականներին կատարված փորձերի արդյունքներից, յեզրակացնում ենք: Վոր ճնկաձև լիսեռի աշխատելու (պիտանի լինելու) ժամանակաշրջանը հավասար է միջին թվով 8000 բանվորական ժամի:

5. Բարբիտի առանցքականների ռացիոնալ աշխատանքների համար պահանջվում է, վոր տրակտորի շարժիչն ամեն 10 ժամիւա աշխատանքից հետո շարժիչի պատենատուփի ստորին վայրեջի ծորակը բացվի և պատենատուփի միջի բանաշխատ յուղը մինչև ծորակը դատարկվի և նոր թարմ յուղ (ավտով) ավելացվի, յուղի բարձրությունը հասցնելով մինչև վերին ստուգիչ ծորակը:

6. Տրակտորի ամեն 50 բանվորական ժամ աշխատանքից հետո հարկավոր է տրակտորի պատենատուփի միջից բոլորովին դատարկել բանաշխատ յուղը և թարմ ավտով լցնել, ձմեռը Ա մարկացի, ամառը՝ Տ, իսկ գարնանն ու աշնանը՝ Ա մարկացի:

Աղյուսակ № 11

Տրակտոր	Ա ճ ռ դ ժամեր	Առանցքա- կալները վեր- ջին անգամ ձգելուց հետո նրանց աշխ. ժամ. քան.	Հանում միջ- նաղիբների հաստու- թյունը՝ մմ-ներով	Ծնկաձև լիսեռի աշ- խատած բանվորական ժամերը	Ելլիպսի միջնաթյունը մմ. ներով
540 ժամ աշխատած որբակառը	99	99	0,20	100	0,03
	229	130	0,18	208	0,05
	333	104	0,16	300	0,075
	435	102	0,21	540	0,115
359 ժամ աշ- խատած որբակառը	93	93	0,14	240	0,09
213	120	0,09	359	0,25	
326	113	0,63	—	—	

Տրամադրություն	Բանվորական ժամանիթ քանակը	Վզիկի հար- թությունը	Մաշվածքի մեծությունը	Ելիպսի մածությունը՝ մմ-ներով
Բ ըրիդագի արգականընթերթ	130	A-A	0,05	
		B-B	0,015	0,035
	223	A-A	0,125	
		B-B	0,04	0,085
	465	A-A	0,26	
		B-B	0,12	0,14
	736	A-A	0,32	
		B-B	0,18	0,14
	1232	A-A	0,61	
		B-B	0,41	0,195
Տ բութագի արգականընթերթ	1500	A-A	0,77	
		B-B	0,57	0,20
	1535	A-A	0,835	
		B-B	0,675	0,165
Տ բութագի արգականընթերթ.	513	A-A	0,205	
		B-B	0,095	0
Տ բութագի արգականընթերթ.	2013	A-A	0,57	
		B-B	0,365	0,205



134

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0007618

ԳԻՆԸ Յ ՈՂԵԲ.

213

A 19850

На армянском языке
БАББИТЫ
и способы их применения



ԱՐՄԵՆԳԻՑ - ԵՐԵՎԱՆ